№ 184 ՇԱԲԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ

1916
ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍԻ № 184

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կ.:
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը:
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տ ե լ ե ֆ օ ն № 2—53

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Թիֆլիսի Կանանց Բարձր Կուրսերին կից

կը բացվի, Լուսաւորութեան Մինիստրութեան Թոյլտուութեամբ, առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից:
Բժշկ. ֆակուլտէտի I կուրսը մտնելու համար խնդիրները պիտի ներկայացնել վերատեսչի անունով կուրսերի դիւանատանը (Անաստասեւսկայա, 22): Խնդրքին պիտի կցել՝ միջնակարգ դպրոցի աւարտման վկայականը իր պատճէնով, մետրիքական վկայականը իր պատճէնով, 2 լուսանկար և 75 ռուբլի:
Ուսման վճարը տարեկան 150 ռ.: Բժշկական ֆակուլտէտի պարապմունքները սկսվելու մասին կը յայտարարվի առանձին:
Կուրսերի վերատեսուչ՝ պրոֆ. Վ. Փ. Բլագովիդով
(17, 20, 23, 25) տռ. 679. 5—2

Արտասահմանից փոխադրվելով
ԲԺԻՇԿ
Ա. Դ. ՃԱՀԲԱԶԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի համալսարանի կլինիկաների
Մասնագէտ կանանց հիւանդութիւնների, մանկաբարձութեան, կանանց միզասեռական օրգանների և նրանց վեներական հիւանդութիւնների:
Ընդունում է ամէնայն օր երեկ. ժ. 5—7-ը, Մելիք-Ազարեանի տանը՝ Верійскій спускъ, № 1, кв. 19: Հեռախօս 1—96.
տռ. (ա.օ.) 586. 100—31

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ, ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԼՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ.—ոսկուց, պլատինից, արծաթից, ֆարֆորից և այլն:
Ատամի հեռացումը առանց ցաւի: Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթօդով:
Ընդունելութիւն 10—2 առաւ., 4—6 ժ. երեկ.:
Լերմոնտովսկայա փողոց № 1 մուտքը պէրէուլօկից:
տռ. (ա. օ.) 622. 100—20

Ծախվում է
ԿԱԹՆԱՏԱՆ
ամբողջ կահ կարասիքը. դիմել կաֆէ «Ցենտրալ», Երևանեան հրապարակ:
տռ. (ա. օ.) 689. 3—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամէն օր՝ 9—1 ժամ ցեր., բացի կիրակի օրերից. Бебутовская 23, тел. 7—92.
տռ. (ա.օ.) 487. 100—62

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ց. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ. օրդ. Մոսկվայի համալսարանի և Բեռլինի համալս. պրոֆեսոր Պօզների ասիստենտ:
Նախկին տարիների նման մայիսի 1-ից կընդունի հիւանդներին Կովկ. հանք. ջրերում՝ Պեատիգորսկում: Հասցէն՝ Դվօրեանսկայա փողոց, սեփ. տուն, № 6, տելեֆօն № 106.
տռ. (ե. հ. շ.) 360 50—45

ՄՈՍԿՎԱՅԻ հայոց եկեղեցիների համար հարկաւոր է
Սարկաւագ
Այդ պաշտօնը ցանկացող հոգևորական և աշխարհական անձինք խնդրի հետ պէտք է ներկայացնեն իրանց վկայագրերն ու ծառայութեան ցուցակը մինչև առաջիկայ սեպտեմբերի 15 ը: Հասցէն՝ Москва, Армянская церковь, въ Комиссію по выбору священно-служителей Московскихъ Армянскихъ церквей.
տռ. 694. 3—2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պ. Ա. ԿՐԱՊՕՏԿԻՆԻ ՆԱՄԱԿԸ

«Бирж. Вѣд.»-ն հաղորդում է, որ շուտով լոյս կը տեսնի Վ. Լ. Բուրցևի բրօշիւրը, որի վերջում տպված են Կրապօտկինի երկու նամակը՝ մէկը ուղղված Ստեֆենսօնին, որ արդէն երևացել է մամուլի մէջ, միւսը ուղարկված է ֆրանսիացի մի նշանաւոր անարխիստի, որը մինչև այսօր ոչ մի տեղ չի տպվել:

«Բրայտօն, 2 սեպտ. 1914 թ.

«...Ցնորքների այդ ծեր աշխարհում ես ապրում դու, որ խօսում ես հաշտութեան մասին: Հաշտութեան պայմանները պէտք է թելադրեն յաղթողները: Դու խօսում ես հաշտութեան պայմանների մասին, երբ Բէլգիան նուաճված է և գերմ. զօրքը 100 կիլօմետրի վրա է գտնվում Պարիզից, իր ետևից քաշ տալով նոր թնդանօթներ 425 միլիմետրանոց, երբ ձեր ամրութիւնները կարող են դիմանալ միայն 275 միլիմետրանոց թնդանօթների. երբ արշաւում են հօների խմբերը, որոնք կռւում են ինչպէս սատանաներ և թքում են մարդկութեան բոլոր կարգերի վրա:

«Մտածիր միայն այն մասին, որպէսզի ետ նուաճվի Բէլգիան, որը այժմ արիւնի և կրակի մէջ է, և պաշտպանութիւն ցոյց տրվի Պարիզին:

«Շուտով, շուտով ձուլեցէք 500 միլիմետրանոց թնդանօթներ, և բոլորին՝ ծերերին, կանանց և երեխաներին հաւաքեցէք սարքէք Պարիզի հարաւային բարձունքները և ուղղեցէք նրանց հօների առաջամասերի դէմ:

«Շուտով, շուտով, այդ ուղղութեամբ ամէն օր աշխատելով, սովորեցէք խորտակել նրանց աէրօպլանները և թշնամուն քշել ամէնուրեք:

«Աւերված Բէլգիան ցոյց է տալիս, որ այդ վայրենի հօրդաների համար գոյութիւն չունի միջազգային իրաւունք, և որ նրանք իրանց համարում են մարդկութեան օրէնքներից դուրս:

«Գիտեն թէ ինչ է կատարվում Բէլգիայում, բայց շարունակում են էլի սպանել:

«Հաւանօրէն յոյս են դնում ռուսների վրա, բայց ոչ ոք քարտէզով չի չափել Էդկունէնից մինչև Բեռլին ընկած տարածութիւնը (600 կիլօմետր), չի մտածել, որ հասարակ զբօսանքի համար կը պահանջվէր 40 օր մինչև Բեռլին հասնելը, և որ գերմանացիները Բեռլինը կը պաշտպանեն, որ այդ 40 օրը կը դառնայ 80 օր, եթէ մինչև անգամ ռուսները մի շարք յաղթութիւններ տանեն:

«Բաւական են ցնորքները: Զինւորվեցէք: Գործադրեցէք գերմարդկային ջանքեր: Միայն այդպիսով Ֆրանսիան կարող է նուաճել նորից իր իրաւունքը և ուժը՝ տարածելու իր քաղաքակրթութիւնը և իր գաղափարները՝ ազատութեան, կօմմունայի և եղբայրութեան, նաև Եւրոպայի ժողովրդի մէջ:

«Զարթեցէք: Մի թոյլ տաք այս սոսկալի նուաճողներին կրկին խանգարելու լատինական քաղաքակրթութեան և ֆրանսիական ժողովրդի զարգացմանը,—որը արդէն ունեցել է 1848 թիւը և իր կօմմունան 1871 թւին, մինչդեռ նրանք դեռ չեն ունեցել իրանց 1789 և 1793 թւականները: Թոյլ մի տաք նրանց Եւրոպայի վրէն փաթաթել միլիտարիզմը ամբողջ հարիւր տարով:

«Ես գիտեմ. Գերմանիայում կան սօցիալիստներ, բայց նրանք համեմատաբար քիչ են, և եթէ նրանք փորձ անեն ապստամբութիւն կազմելու, նրանց կը ճնշեն իսկոյն:

«Ի՞նչ կը դառնայ այն միլիտարիզմը, որ տիրում է Գերմանիում, եթէ նա յաղթանակող լինի Եւրոպայում:

«Ես նոյնպէս, ինչպէս և դու, յոյս ունեմ յաղթութեան, բայց Պարիզի հնազանդութիւնը, որի մասին ինձ յայտնեց ամերիկացի մի ընկեր, ինձ զայրացնում է: Գերմանական զօրքերին պէտք է հակադրել թւականօրէն շատ ուժ: Մենք այստեղ անգլիացի բարեկամների հետ աշխատում ենք օգնական ուժեր ուղարկել, բայց դրա համար ժամանակ է հարկաւոր: Ցամենայն դէպս արդէն սեպտեմբերի 2-ն է, և գերմանացիները չը կատարեցին իրանց խօստումը և Պարիզ չը կարողացան մտնել:

«Թոյլ չենք տայ, որ այդ գազանները մտնեն Պարիզ»:

ԹՈՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԴԻ ՄԱՍԻՆ

(Յօդուած Իւ. Սեմենովի)

Երէկ մենք «Кавк. Сл.»-ից արտատպեցինք Մագիստրանտի յօդուածը Հայաստանի ապագայի մասին: Այդ նոյն թերթի խմբագիրը միևնոյն համարում Մագիստրանտի յօդուածի առիթով գրում է հետևեալը.

*

Պատերազմի սկզբում Թիւրքաց Հայաստանի առիթով կատարված մտքերի փոխանակութիւնից յետոյ, այդ խնդիրը վերացաւ մամուլի էջերից: Այն ժամանակ, մտքերի փոխանակութեան միջոցին, բանաձևվեցին երկու տեսակէտ. Միլիւկօվը խօսում էր հասարակ ամնիստիայի մասին, որ կանէր Ռուսաստանը հայկական վիլայէթները, դրա հետ առաջարկելով հայերին ամնիստիայից յետոյ գործել ռուս քաղաքական կուսակցութիւնների հետ միասին, յետագայում հայկական աւտօնօմիա ձեռք բերելու Ռուսաստանի ներսում: Կովկասի հայկական լրագիրները և Մոսկվայի հայերը կողմնակից էին Թիւրքաց Հայաստանի աւտօնօմիային, խստօրէն բաժանելով կովկասահայերին Թիւրքաց Հայաստանից: Բայց հայ խմբերից և ոչ մէկը չառաջադրեց աւտօնօմիայի որոշակի ծրագիրը, ոչ ոք չը ցոյց տուեց, թէ ինչ պէտք է հասկանալ այդ խօսքի տակ. և նոյն իսկ տարաձայնութիւն կար այն հարցի մասին, թէ ում հովանաւորութեան, ում սուվերէնիտէտի ներքոյ պէտք է գտնվի աւտօնօմ Թիւրքաց Հայաստանը: Մի խօսքով, իսկական հասարակական կարծիք այդ խնդրի մասին չը կար: Հայկական հասարակական կարծիքը իր մեծամասնութեան մէջ արտայայտվում էր մի մշուշապատ բառով—«աւտօնօմիա», որի մէջ ոչ ոք չէր դնում կօնկրէտ բովանդակութիւն: Իսկ հայերի փոքրամասնութիւնը, որ չէր բաժանում աւտօնօմիստների տեսակէտը, չարտայայտվեց, օժտված լինելով չը կազմակերպված անվստահութեամբ:

«Кавк. Сл.»-ն բազմիցս շօշափել է այդ խնդիրը: Մենք ասել ենք, որ Թիւրքա Հայաստանի բաղդը զուտ հայկական հարց չէ, այլ միջազգային, մասնաւորապէս ռուսական, և որ չի կարելի նրան խստօրէն բաժանել Անդրկովկասի շահերից: Ուստի, մեր կարծիքով, նրան պէտք է քննել այդ բարդ խնդրի ամբողջ ծաւալով: Այդ աւելի քան անհրաժեշտ էր, որովհետև մեր դաշնակիցների կարծիքը ոչ ոքին յայտնի չէր: Մենք ենթադրում էինք, որ Թիւրքաց Հայաստանի բաղդը պէտք է վճռվի միջազգային կօնգրէսում:

Կարող է թւալ, որ Ռուսաստանի համար, ամենևին շահագրգռված չը լինելով աւելորդ հողամաս ձեռք բերելու Անատոլիայում, անհրաժեշտութիւն կը հանդիսանար մի տեսակ միջազգային աւտօնօմ բուֆֆէր ստեղծելու հարևան պետութիւնների միջև: Սակայն հանգամանքները պատերազմի սկզբից բաւական փոխվել են: Որքան կարելի է դատել մեր դաշնակիցների կարծիքների մասին այն զրոյցների հիման վրա, որ ունեցել են արտասահմանում եղած ռուս և հայ քաղաքական գործիչները, Թիւրքիայի բաժանումը արդէն վճռված հարց է: Անգլիան և Ֆրանսիան, որքան կարելի է դատել այդ զրոյցներից, գրաւելով իրանց համար մի քանի շրջաններ, Ռուսաստանին կը թողնեն այն, ինչ որ նա կը նուաճի (բացի Դարդանէլից, որը չի մտնում շրջանների բաժանման մէջ): Իսկ որովհետև այդ շրջանների ներսը գոյութիւն ունեն մի շարք բարդ խնդիրներ, ուստի իւրաքանչիւր պետութեան կը թողնվի ինքը լուծել այդ խնդիրները, որպէսզի ազատեն ամէն մէկին մշտական միջամտութիւնից: Այսպիսով, Թիւրքաց Հայաստանի կազմակերպութեան հարցը, ըստ երևոյթին, դադարել է միջազգային լինելուց, դառնալով բացառապէս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿՆԱՐԿ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՒԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*)

II

Հայ գիւղացին ամբողջապէս ենթակայ է ֆէօդալ-աղաների կամայականութիւններին. հայ գիւղացի ժողովուրդը տնքում է ծանր հարկերի տակ. նրան կեղեքում է ոչ միայն աղան, այլ և բազմաթիւ նրա պաշտօնեաները: Գիւղացու դրութիւնը անտանելի է այն պատճառով, որ հարկերի չափի որոշումը կախված է գիւղատիրոջ քմահաճոյքից: Բացի բազմաթիւ տուրքերից, գըլխահարկից և ցորենի բերքի կէսից, աղան օգտվում է ամենալայն չափերով բեգեարի իրաւունքից: Պետութիւնը չէ պաշտպանում գիւղացիներին. նրանց միջև չը կան անմիջական յարաբերութիւններ. ամէն բան կատարվում է կալուածատէրերի միջոցով:

Իսկ հայ գիւղացու իրաւական դրութիւնը շատ աւելի անտանելի է, քան թէ քաղաքացունը: Պարսկահայ գիւղացին ենթակայ է քիւրդերի և շահսէվանների շարունակական կողոպուտներին. համարեա ամէն տարի վերոյիշեալ ցեղերը, օգտվելով պարսից կառավարութեան անզօրութիւնից և, գուցէ, անտարբերութիւնից, կողոպուտի և ջարդի են ենթարկում առանց այն էլ կալուածատէրերի ծանր լուծի տակ հեծող գիւղացուն:

Գիւղացու դժոխային դրութիւնը որոշ չափով թեթևացնում է թեմական խորհուրդը և թեմակալ առաջնորդը, որը ունի բաւական մեծ բարոյական հեղինակութիւն: Թեմական կանոնադրութիւնը, հաստատված կաթողիկոսի և Շահի կողմից, տալիս է հայ համայնքին բացի կուլտուրական ինքնավարութիւնից՝ նաև որոշ դատաստանական իրաւունքներ, որոնք գլխաւորապէս վերաբերում են ամուսնական և ժառանգական գործերին: Սակայն պիտի ի նկատի ունենալ, որ թեմական խորհրդի, որը պատգամաւորական ժողովի գործադիր մարմինն է, վճիռները ունեն զուտ բարոյական նշանակութիւն, նրանք չունեն իրաւաբանական ոյժ:

Այդ պատճառով նրանք, որոնք անբաւական են մնում թեմական խորհրդի վճռից, գործը փոխադրում են պարսկական և, օտարահպատակ լինելու դէպքում, հիւպատոսական դատարանը:

Իրաւական այսպիսի պայմաններում պարսկահայը չէր կարող տնտեսապէս զարգանալ: Քաղաքացի հայը, որի համար պետական ասպարէզը փակ է, որը պարսկական պետական պաշտօնեայ լինելու պատւին չէ կարող արժանանալ, որովհետև նա «անհաւատ» է, զբաղվում է գլխաւորապէս վաճառականութեամբ և արհեստներով: Պարսկաստանից հայերը արտահանում են չոր մրգեղէն, բամբակ և այլ հասարակ հում նիւթեր, որի փոխարէն ներմուծում են եւրոպական գործարանային ապրանքներ: Եւ որովհետև առևտրի ու արդիւնաբերութեան զարգացումը սերտ կերպով կապված է ուժեղ իրաւակարգի, ճանապարհների հաղորդակցութեան հետ, որովհետև Պարսկաստանում չը կայ ոչ առաջինը և ոչ երկրորդը, այդ պատճառով առևտուրը և արդիւնաբերութիւնը չեն կարողանում ծաղկել: Գլխաւորապէս այս պատճառով և մասամբ հայ վաճառականների անպատրաստութեան շնորհիւ՝ բազմաթիւ հայ վաճառականական տներ սնանկացան: Հայ վաճառականը ռիսկ չէ անում, մեծ գումարներ չէ դնում գործի մէջ, որովհետև երկրի իրաւակարգը նրան ոչ մի ապահովութիւն չէ տալիս:

Արհեստների մէջ հայերը արագ կերպով առաջադիմում են, սակայն պիտի ի նկատի ունենալ, որ իրանց տնտեսականը բարելաւել չէ կարելի, որովհետև մահմեդական ազգաբնակութեան միայն չնչին տոկոսն է օգտվում նրանց պատրաստածներից: Լինելով շարունակական յարաբերութիւնների մէջ ռուսահայերի հետ, Ատրպատականի հայը սնվել է ռուսահայ կուլտուրայով, սակայն նրա իրաւական դրութիւնը նրան կուլտուրապէս զարգանալու կարելիութիւն չէ տալիս:

Ատրպատականի համարեա բոլոր հայաբնակ քաղաքներում, ինչպէս և մեծ գիւղերում, կան դպրոցներ, իսկ Թաւրիզում գոյութիւն ունեցող դպրոցները, Արամեան և Հայկազեան, մի ժամանակ հասել էին բաւական ծաղկած դրութեան՝ ունենալով հինգ և վեց հիմնական դասարաններ: Գոյութիւն ունէին բազմաթիւ կուլտուրական ընկերութիւններ և հիմնարկութիւններ, որոնցից ամենից աւելի աչքի էր ընկնում Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութիւնը: Թատրոնական գործը ունի մօտ 50 տարվայ պատմութիւն, գլխաւոր քաղաքներում կան թատերասրահներ, որտեղ ներկայացումներ են տալիս յաճախ սիրողները, երբեմն էլ Կովկասից եկող դերասանական խմբերը:

Ատրպատականը սեփական մամուլ և գրականութիւն չէ ունեցել, բացի Թաւրիզում հրատարակվող թերթերից, որոնք ծաղկելու ոչ մի հնարաւորութիւն չունեն, նախ հայ ընթերցող ժողովրդի փոքրաթւութեան և ապա Ատրպատականի մէջ լաւ ճանապարհների պակասութեան պատճառով, Ատրպատականի հայը ամբողջապէս իր մտաւոր սնունդն ստանում է կովկասահայ մամուլից և գրականութիւնից:

Կարող է արդեօք Ատրպատականի հայը կուլտուրական զարգացման բարձր աստիճանի հասնել ներկայ իրաւական պայմաններում. պատասխանը կարող է լինել միայն բացասական:

Այն կրթութիւնը, որ հայերը ստանում են Ատրպատականի գլխաւոր քաղաքների դպրոցներում, թոյլ է տալիս կամ գաւառական ուսուցիչ դառնալ և կամ գնալ առևտրական-վաճառականական ուղիով. միւս բոլոր ճանապարհները նրանց համար փակ են: Հայերը ներկայացնում են պարսկական խաւարի մէջ մի կղզի, որ ամբողջապէս թողնված է իր սեփական ոյժերին: Պետութիւնը իր զաւակների մասին չի մտածում, նրանց կուլտուրականի համար չի ծախսում և ոչ մի կոպէկ: Եթէ նոյնիսկ պետութիւնը ցանկանար բաց անել ընդհանուր պետական դպրոցներ, հայերը անհամեմատ աւելի բարձր կանգնած լինելով պարսիկներից՝ չէին ցանկանայ երբէք եւրոպական քաղաքակրթութեան հետ ծանօթանալ պարսկերէնի միջոցով: Սրան ապացոյց կարող է ծառայել այն, որ հայ ինտելիգենտ ընտանիքներում պարսկերէն խօսքեր գործ ածել խօսակցութեան ժամանակ ամօթ է համարվում, «պարսիկ» խօսքը վիրաւորական դարձուածք է դարձել, մինչդեռ ռուսահայերը իրանց պարտքն են համարում առօրեայ խօսակցութիւնը զարդարել օտար խօսքերով:

Եւ որովհետև երկրի իրաւակարգի շնորհիւ հայերը չեն կարողանում աճել, որովհետև նրանք թւով քիչ են և պետութիւնը նրանց վրա ոչ մի կոպէկ չէ ծախսում, իսկ պատգամաւորական ժողովը իրաւունք չունի տուրքեր նշանակել հայ համայնքի վրա, այդ պատճառով պարսկահայի կուլտուրական զարգացումը կաղում է. պատահական բարեգործութիւնները միայն պալլիատիվներ են: 19-րդ դարի վերջերից սկսած նըկատվում է Ատրպատականի հայերի մէջ ընդհանուր ձգտում՝ տալ երեխաներին ռուսական կրթութիւն: Սակայն այս դէպքումն էլ հանդէս են գալիս պետական կեանքի բացասական կողմերը:

Ռուսական բարձրագոյն կրթութիւն ստացողները, բացի բժիշկներից, մնում են այստեղ անգործ, կամ թէ նրանց վարձատրութիւնն ամենևին չէ համապատասխանում դպրոցական շրջանում նրանց գործադրած աշխատութեան և արած ծախսերին: Այս պատճառով Ատրպատականի հայերի մէջ բարձր ինտելիգենցիան թւով աննշան է:

Անմխիթար և խախուտ հիմքերի վրա են դրված թատրոնական, լրագրական և ուրիշ կուլտուրական գործերը, որոնք կանոնաւոր օրգանական զարգացման հնարաւորութիւնից զուրկ են:

Ապրելով իրաւազուրկ պայմաններում, կիսաճորտ դրութեան մէջ, անկարող լինելով զարգանալ տնտեսապէս և կուլտուրապէս, հայ գիւղացին իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ գաղթում է Կովկաս, գլխաւորապէս Բագու, աշխատելու համար

---

* Տես «Մշակ» № 183.

Թիֆլիսի Հայ Աւետարանականների Ժողովարանում, (Նիկոլաեւսկայա փ. № 17)
Աստուծոյ խօսքը կարդացվում և քարոզվում է կիրակի օրերը՝ առաւ. ժամը 11-ին և երեկոյեան ժամը 5-ին։
(բ. եր.) (շ.կ.) 176. 50—33

ռուսականի։ Անեկսիան սկսում է կատարված փաստ դառնալ, և միջազգային բուֆէրի կազմակերպութիւնը չի մտնի հաշտական կօնգրէսի ծրագրի մէջ։

Այսպէս են փաստերը։

Բայց, այնուամենայնիւ, հաշտական կօնգրէսում հայոց հարցը կարող է բարձրացվել, որովհետև գոյութիւն ունեն միջազգային փոխադարձ պարտաւորութիւններ հայերի նկատմամբ։ Եթէ այդ պարտաւորութիւնների ոյժը այժմ որոշ չափով ընկնում է, այդ դէպքում Թիւրքիայի Յաջորդի համար նրանք պէտք է դրվեն որևէ ձևի մէջ։ Ուստի հայերի մասին եղած պայմանագրերի վերաքննութիւնը հաշտական կօնգրէսում անխուսափելի է։ Եւ առանց նրա համար, որպէսզի հայոց հարցը միջազգային կօնգրէսում դրվի հարկ եղած կերպով, դրա համար անհրաժեշտ է նրա նախնական հրապարակական քննութիւնը։ Շահագրգռված անձանց բոլոր ծրագիրները, իրերի դրութեան փաստական տուեալներով, պէտք է տրվեն և ենթարկվեն քննութեան։

Գ. Մագիստրանտի յօդուածը մէկն է մասնաւոր կարծիքներից, որքան ծայրայեղ իր հակաաւտօնոմիական ուղղութեամբ, նոյնքան ծայրայեղ է «Հորիզոնի» շուրջը խմբված շրջանների կարծիքը։

Չի կարելի համաձայնել հեղինակի՝ աւտօնոմիայի տեսակէտի հետ առ հասարակ։ Պէտք է յիշել, թէ ինչպէս այդ խիստ ոգով խօսվում էր նախ քան պատերազմը Լեհաստանի աւտօնոմիայի մասին։ Այժմ դրա մասին խօսում են բոլորովին այլ կերպ։ Պատերազմի ոչ մի ոյժ չէր կարող ուղիղ ճանաչել այն սկզբունքը, որ էապէս ուղիղ չէր։

Ճիշդ այնպէս և ներկայ դէպքում։ Ժողովուրդները, ռուս պետականութեան տակ զարգացող թէ իրանց ազգային կուլտուրական կեանքը զարգացնող, անխուսափելիօրէն գնում են դէպի աւտօնոմիական կարգերը։ Հարցը կարող է լինել միայն ձևի և ժամանակի մասին։

Չի կարելի համաձայնել յօդուածագրի այն խօսքերի հետ, որ վերաբերում է նեղուցներին։ Ռուս պետական մտքի համար նեղուցների հարցը հիմնական հարց է։ Ռուս հասարակութիւնը, մամուլը և օրէնսդրական հիմնարկութիւնները միշտ կը հրաժարվեն Թիւրքական բոլոր վիլայէթներից, որոնք երկար ժամանակ դեռ միայն բեռ կը լինեն պետութեան, և երբէք չեն հրաժարվի նեղուցներից, որ Ռուսաստանի առաջ բացում է առևտրի ազատութիւն արտաքին աշխարհի հետ։

Մագիստրանտի յօդուածը դուր չի գայ շատերին, բայց նա արտայայտում է հայեացքներ, որոնք այստեղ, տեղական մամուլում, չունեն քաղաքացիական իրաւունք, թէև հայ հասարակութեան մի մասը համակարծիք է դրանց։

Թող անբաւականները առարկեն։ Կարծիքների ընդհարումից ծնվում է ճշմարտութիւնը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռումինիայի նաւահանգիստներում ձերբակալված են առաջնակարգ աւստրիական շոգենաւեր։

◆ Բաւարական Լէօպօլդ թագաւորազնը Գերմանիայի և Աւստրիայի կողմից աւտօնօմ Լեհաստանի թագաւոր է ճանաչվելու։

◆ Ռումինիայից Ռուսաստան է մեկնել յատուկ զինուորական գործակալ, որը պիտի զբաղվի ռումինական զօրքը ռազմամթերքով ապահովելու հարցով։

◆ Բոլգարական և թիւրքական դեսպանները մեկնեցին Բուքրէշից։

◆ Աւստրո-ունգարական գլխաւոր շտաբը յայտնում է առաջին ընդհարումների մասին աւստրո-ռումինական սահմանում և Արևմտեան-Ունգարիայում։ Կռիւը սկսվել է նաև Կարպատների անցքերում Բօդիէտուրմում դէպի հարաւ Կրասսօյից։

◆ «Berl. Tid.»-ի ասելով յոյները թողնելով ամրութիւնները՝ բոլգարներին են յանձնել նաև թնդանօթները և ուրիշ ռազմամթերք։ Կավալայից նահանջեցին 3 յունական դիվիզիա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

— o —

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

18 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Թիւրքերի յարձակումները Գիւմիշխանէի շրջանից դէպի արևմուտք մենք ետ մղեցինք, խոշոր կորուստներ պատճառելով թշնամուն, որ թողել է մեր դիրքերի առջև բազմաթիւ դիակներ։ Վանի լճի վրա մեր նաւը աջող կերպով կրակեց թիւրքերի զօրակայանի վրա՝ Թուխ գիւղի մօտ։

ԼՕՆԴՕՆ.— Պաշտօնական հաղորդագրութիւն Եգիպտոսում գործող անգլիական զօրքերի հրամանատարի.

Հարիւր հոգուց բաղկացած թշնամու ուղտաւոր հետախոյզների մի խմբակ փորձեց մօտենալ Բիրել-Բախադին, ետ մղվեց և հալածվեց մերոնցից 6 մղոն տարածութեան վրա։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

18 օգոստոսի

ԱՄՍՏԵՐԴԱՄ.— Կ. Պօլսից հեռագրում են, որ Թիւրքիան պատերազմ է յայտարարել Ռումինիային։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ռումինական առաջին պաշտօնական հաղորդագրութիւն.

Ընդհանուր զօրահաւաքը, որ սկսվել է լոյս օգոստոսի 15-ի գիշերը, ընթանում է նորմալ կերպով։ Պատերազմի յայտարարութիւնը Աւստրո-Ունգարիային ներկայացված է Վիէննայում օգոստոսի 15-ի երեկոյեան ժ. 9-ին։ Լոյս օգոստոսի 15-ի գիշերը ռումինական զօրքերը յարձակումներ սկսեցին աւստրո-ունգարական սահմանի վրա։ Մեզ դաշնակից Կայսերական ռուս զօրքերն անցան Դօբրուջայով և խանդավառութեամբ ընդունվեցին ազգաբնակութիւնից։ Ռուսական ռազմանաւերը հասան Կօնստանցա և աջակցում են Սև ծովի եզերքի պաշտպանութեան։ Աւստրո-ունգարական ռազմանաւերը և հրետանիները հրաձգութեան ենթարկեցին Վիօրչերօվօն, Տուրն-Սեվերինը և Ժուրժեվօն։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ռումինական պաշտօնական հաղորդագրութիւն.

Հիւսիսային և հիւսիս-արևմտեան ճակատներում մեր զօրքերի առաջխաղացումը շտապով շարունակվում է բոլոր ուղղութիւններով։ Մենք գրաւեցինք Վալէատարդան-Ժէյը, Սատուլը, Դարստէն, Բրաշովի մօտ, նաև խոշոր արդիւնաբերական կենտրոն Պետրօշէնի քաղաքը։ Մեր կորուստները աննշան են։

Հարաւային ճակատ։ Աւստրո-ունգարական նաւերը ռմբակոծեցին Զիմնեցէան։ Լոյս օգոստոսի 16-ի գիշերը թշնամու մի ցեպպելին և մի աէրօպլան ռումբեր նետեցին Բուխարեստի վրա՝ ոչ մի վնաս չը հասցնելով։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Վիէննայից հաղորդում են ռումինական զօրքերի առաջխաղացման մասին։ Աւստրո-ունգարական առաջապահ մասերը, որ բանակած էին սահմանի վրա, քայլ առ քայլ ետ են նահանջում։ Պատերազմից առաջ արված կարգադրութեան համաձայն՝ ռումինացիք գրաւել են Պետրօշէնին, Կրօնշտադտը, Հեզդին և Վասարգելին։ Աւստրո-ունգարական զօրքերը կռւի են բռնվել ռումինական հիւսիսային զօրախմբերի հետ Գերգի լեռներում։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ժամանել է Ռումինիայում գործող ռուս զօրքերի հրամանատարը ուղեկցութեամբ իր շտաբի 5 օֆիցերների։ Փողոցներով անցնելու ժամանակ՝ ազգաբնակութիւնը համակրական խանդավառ ցոյցեր կազմեց նրանց հասցէին։ Վաղը ռուս զօրքերի հրամանատարն ընդունվելու է թագաւորի պալատում։

ՕԴԵՍՍԱ.— Հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ բերվել են Ռումինիա սերբիական զօրքեր, որոնք ռուսների և ռումինացիների հետ կողք կողքի պիտի կռւեն ընդհանուր թշնամու դէմ։ Այդ զօրքի հրամանատարն է Միշից գեներալ շտաբի նախկին կառավարիչ Ստեփան Գաջիչը։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Ստրումա գետի ռազմաճակատի վրա, Դօյրանեան լճի շրջանում դաշնակիցները ռմբակոծեցին թշնամու դիրքերը։ Վարդարից դէպ արևմուտք դաշնակից զօրքերը առաջացել են Դումնիցայի ուղղութեամբ։ Վերտեկէի և Օստրովօյի շրջաններում շարունակվում է լարված թնդանօթաձգութիւն։ Բոլգարների մի զօրախումբ, որ յարձակում գործեց Օստրովօ լճից դէպի արևմուտք, ենթարկվեց սերբիական թնդանօթների կրակին և ետ նահանջեց՝ կրելով խոշոր կորուստներ։

ԼՕՆԴՕՆ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Թշնամու թնդանօթները Ստրումա գետի ռազմաճակատում կրակ բացին Կօպրինչայի վրա։ Մենք լռեցրինք թշնամու թնդանօթները։ Մեր աէրօպլանները ռմբակոծեցին թշնամու ռազմական տրանսպօրտները Դարնուլում։

ՊԱՐԻԶ (Ուշացած).— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Երէկվանից Ստրումայի վրա կարևոր բան չեղաւ։ Դօյրանեան լճի շրջանում և Վարդար գետի ափերին աշխոյժ թնդանօթաձգութիւն է։ Մենք աւերեցինք աէրօպլանների կայարանը Մօգլէնյում։ Լճից դէպի արևմուտք մեր առաջխաղացումը Լումնիցայի ուղղութեամբ շարունակվում է։ Սերբիական բանակը շարունակում էր առաջ խաղալ Վերտենիկայի ուղղութեամբ և ետ մղեց բոլգարների ուժգին յարձակումները Օստրովօի և «1506» բարձունքի վրա. այս վայրից դէպի հարաւ սերբիացիք գերիներ վերցրին, որոնց թւում կան օֆիցերներ։ Սերբիական ձախ զօրաթևը կասեցրեց թշնամու յարձակողական փորձերը, պատճառելով նրան ծանր կորուստներ։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

18 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական. Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ստօխօդի արևմտեան ափում 17-ի առաւօտեան արտիլերիական կարճատև նախապատրաստութիւնից յետոյ թշնամին յարձակում գործեց մեր այն դիրքերի դէմ, որ գտնվում են Գելենին գիւղից դէպ հիւսիս։ Յարձակումները վանված են թշնամու համար խոշոր կորուստներով։ Կօվէլի ուղղութեամբ, Վէլիցկի գետի շրջանում թշնամու 2 աէրօպլան յարձակվեցին մեր աէրօպլաններից մէկի վրա, որը իջեցրվեց և ընկաւ մեր դիրքերի մօտ։ Քաջարի օդաչու պօրուչիկ Տիխօմիրօվը և հսկող պօրուչիկ Դանիլեվիչը սպանվեցին։

ԼՕՆԴՕՆ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Եղանակը առաջվայ պէս վատ է, ռազմական գործողութիւնները սահմանափակվում են մանր գործերով։ Թշնամու երկու վարանոտ փորձերը, Գելիմօնի մօտ, ետ մղվեցին։ Մեր զօրքերը՝ պարզելու համար թէ ինչ է մնացել Մօկէ ագարակից, հետախուզութիւն կատարեցին և վերադարձան իրանց տեղը։ Մենք աջողութեամբ յարձակվեցինք թշնամու խրամատների վրա Նէվիլ-Սեն-Վաաստի մօտ և ոչ մի կորուստ չը կրելով, թշնամուն պատճառեցինք վնասներ և վերցրինք 8 գերի։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութ.

Սօմմի ռազմաճակատի վրա չափաւոր թնդանօթաձգութիւն էր։ Եղանակը առաջվայ պէս վատ է։ Լօտարինգիայում Ռէյօնի շրջանում թշնամու զօրամասերը կրկնակի փորձեցին մօտենալ մեր գծերին, բայց ետ մղվեցին պատնէշային կրակով։ Զօրաճակատի մնացեալ մասերում էական ոչինչ չեղաւ։

ԼՕՆԴՕՆ.— Մարտենպիւյից դէպի հարաւ մենք առաջ տարանք մեր գծերը՝ վերցնելով գերիներ, որոնց թիւը դեռ պարզված չէ։ Փոքրիկ ընդհարումների միջոցին մենք վերցրին ևս 38 գերի։ Չը նայած անբարենպաստ եղանակին, տեղի ունեցաւ հրաձգութիւն Անկրի և Սօմմի միջև։

ՊԱՐԻԶ.— Պաշտօնակ. հաղորդագրութիւն.

Ռազմաճակատի մեծագոյն մասում գիշերը անցաւ հանգիստ։ Լօտարինգիայում օրավերջին գերմանացիները փորձեցին յանկարծակի յարձակում գործել Ֆարրուա անտառի վրա և մտան մեր խրամատների մի մասի մէջ, բայց իսկոյն դուրս քշվեցին հակայարձակումով։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

18 օգոստոսի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ֆերդինանդ թագաւորի մանիֆեստը ռումինական ժողովրդին ասում է. «Ռումիններ. Արդէն երկու տարուց աւելի է, որ պատերազմը աւելի և աւելի սերտ օղակ է կազմում մեր սահմանի շուրջը և խիստ քանդելով հին Եւրօպայի հիմունքները՝ ցոյց է տալիս, որ եկել է այն օրը, որը վաղուց սպասում էր ժողովրդական գիտակցութիւնը և որը կարելիութիւն կը տայ ազգին ապագայում ապրել խաղաղ կեանքով, այն օրը, երբ պիտի վերջացվի այն գործը, որ սկսել են ռումինական պետութեան հիմնադիրները՝ միացնելով Դանուբի երկու իշխանութիւնները ազատարար պատերազմով և իրանց անդուլ աշխատանքով յօգուտ ազգային վերածնութեան։ Եկաւ ժամանակ ընդմիշտ իրագործելու այն, որը Միքայէլ Քաջը իրագործեց կարճ ժամանակի համար, այն է՝ ի մի խմբել Կարպատների երկու լանջերում, նոյնպէս և Բուկօվինայի լեռներում և դաշտերում ապրող ռումիններին, որտեղ մի քանի հարիւր տարի գտնվում է Ստեփան Մեծի աճիւնը։ Մեզանից, մեր քաջութիւնից և առաքինութիւնից է կախված մեռածների յիշատակին յարգանք մատուցելը, ստեղծելով Տիսայից մինչև Սև ծով մեծ ազատ Ռումինիա, ուր ազգաբնակութիւնը զարգանար խաղաղ, մեր ցեղի սովորութիւնների և իդէալների համաձայն։ Ռումիններ. ոգևորված մեր սրբազան պարտքով, վճռած լինելով քաջութեամբ անել զոհաբերութիւններ, որոնք պահանջվում են կատաղի պատերազմի կողմից, գնանք կռւի ժողովրդական ամենազօր թափով, անդրդուելի հաւատալով իր ճակատագրին։ Յաղթութեան փառաւոր պտուղները մեզ կը վարձատրեն. Աստուծոյ օգնութեամբ դիմենք առաջ։ Ֆերդինանդ»։

Թագաւորի հրամանը զօրքին հետևեալն է. «Զինուորներ, ես ձեզ կանչել եմ, որպէսզի դուք մեր դրօշը առաջ տանէք մեր սահմանի այն կողմը, որտեղ մեր եղբայրներն անհամբեր և յուսահատ սպասում են ձեզ։ Մեծ զօրապետներ Միքայէլ Քաջի և Ստեփան Մեծի յիշատակը, որոնց աճիւնը գտնվում է թշնամու լծից ձեր ազատելիք երկրում, յորդոր է կարդում ձեզ, [illegible] յաղթութիւն, վայել Րազբօէնի, Կալուգարէնի և Պլեւնայի յաղթական մարտիկների յաջորդներին։ Դուք կանչված էք կռւելու թև-թևի տուած մեծ ժողովուրդների՝ մեր դաշնակիցների հետ. դուք պիտի տաք կռւիներ տեսէք։ Արդ՝ տանենք Աստուծոյ օգնութեամբ զրկանքներ, և յաղթութիւնը մերը կը լինի։ Ապացուցէք, որ դուք արժանի էք ձեր նախնիների փառքին և մեր միացված ցեղը դարից դար ձեզ կօրհնի և կը փառաբանի»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Մինիստր-նախագահ Բռատիանուի եղբայր Վինտիլա Բրատիանուն նշանակվել է զինուորական մինիստր։ Մինիստր-նախագահը շարունակում է մնալ առանց պորտֆէլի։

ԳՐՕԶՆԻ.— Նոր-Ալդի գիւղի չէչէնները, որոնց հողի վրա խփել է նաֆթային ֆօնտան, շրջանապետի միջոցով պատերազմի կարիքների համար նուիրեցին 100,000 ռ.։

գործարաններում։ Գնացողներից շատ քչերն են վերադառնում, իսկ վերադարձողներն էլ կամ ծեր են, կամ անբուժելի հիւանդներ։ Հայ գիւղերում քիչ կան երիտասարդներ. նրանց մեծամասնութիւնը պանդխտութեան գաւազանն է վերցրել «փող աշխատելու» համար, գիւղերում գլխաւորապէս մնում են կանայք, երեխաները և ծերունիները։

Գաղթում է նոյն պատճառով և քաղաքի հայը և նոյնպէս մեծ մասամբ չի վերադառնում։

Եւ շնորհիւ գոյութիւն ունեցող իրաւական և տնտեսական պայմանների, որոնց հետևանքն է արտագաղթը, Ատրպատականի հայութիւնը չի աճում։ Ներկայ դարի սկզբում Թաւրիզում և նրա շրջակայքում, Արդաբիլում, Մարաղայում, Ղարադաղի, Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, Սուլդուզի և Միանդաբի գաւառներում հաշւվում էր մօտաւորապէս 32,000 հայ։ Այժմ, 15 տարի յետոյ, հայ ազգաբնակութիւնը ամենևին չի աճել։ Համաձայն վերջին ճշգրիտ վիճակագրութեան, որը կատարել է անձամբ պատերազմից քիչ առաջ Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսէս եպ. Մելիք-Թանգեանը, Ատրպատականի քաղաքներում և գիւղերում հայ ազգաբնակութիւնը կազմում է՝

Քաղաք կամ գիւղ	տուն
Թաւրիզ	700
Մուժամբար	65
ա) Սալմաստ	700
Հաֆթւան	400
Փայաջուկ	320
Մահլամ	180
Ղալասար	80
Սաֆրա	150
Հին քաղաք	100
Սառնա	80
Ախտախանա	50
Ղըլչա	45
Շէյթանաւա	15
Դրէշկ	24
Քօջամէլ	10
Ղարաբաղ	15
Քալաշան	12
Խարօվա	22
Սարամէրիկ	40
Վարգան	2
Ուլա	2
Գիւլիզան	2
Ընդամենը Սալմաստի գաւ.	2249 տ.
բ) Խոյ	
Խոյ	120
Շօրա	30
Սէյդավար	100
Դիզա	15
Ընդամենը Խոյ գաւ.	265 տ.
գ) Ուրմիա	
Ուրմիա	70
Զարբաշ	10
Գիգալա	20
Ռահվա	120
Սոլդկալա	15
Ջիւլակլու	12
Խանթաբախան	23
Գարագեօզ	8
Գեարդաբադ	120
Փախկաբայլու	30
Կըլաշուղ	22
Բագբաւ	50
Նախչուանթափա	84
Խասլու	40
Իքաղաջ	44
Շուբբլուպաթ	20
Կարակէղ	25
Կարաջալու	25
Սուփրուղան	14
Շիրապատ	30
Սդա	10
Խանիլան	2
Ընդամենը Ուրմիայի գաւ.	793 տ.
դ) Բարանդուզ	
Բարաւու	60
Սարդարօթ	20
Դարբատա	36
Ռիզաթաքա	40
Դարալան	6
Բալանիշ	20
Թամարա	30
Քուքա	8
Ալկիան	2
Արտիշաթաքա	2
Ռամանա	2
Շէյթանաւա	14
Բարանդուզի գաւառում	240 տ.
ե) Սուլդուզ	
Նագադէն	55
Զայանէ	8
Ջեօթնավա	4
Քարվանսարա	3
Թօփազավա	10
Ռահըթխանէ	9
Դալլա	1
Մամաթեար	40
Կեօլ	7
Աննա	2
Հասանլի	2
Քառխանա	2
Ընդամենը գաւառում	143 տ.
զ) Միանդաբ	
Միանդաբ	20
Քիրրզախա	8
Կարավէրան	9
Թաղիապատ	80
Սոլթափա	5
Միանդաբի գաւառում	122 տ.
է) Սուջ-Բուլաղ	
Սուջ-Բուլաղ	15
Դարօղլի	2
Լաճ	2
Կըլկըրի	1
Համիապատ	1
Կապալա	1
Հաջիխօշ	2
Բիսակարիլ	1
Սարապ	1
Սուջ-Բուլաղի գաւառում	27 տ.
ը) Ղարադաղ	
a) Դիզմար (գաւառակ)	
Ազաջան	44
Իւրկիւթ	72
Սարգուն	35
Ղշլաղ	40
Խանագեահ	100
Օղան	75
Լիման	15
Զարաշէն	35
Ղուլուտեա	40
Շավլին	8
	464 տ.
b) Մէլէքփարա (գաւառակ)	
Ողան	70
Մկնիթ	42
Գրմեաւա	36
Քըլալա	30
Նէփէշուռ	30
Ընդամենը	208 տ.
c) Մնջաւան (գաւառակ)	
Վինա	120
Ամրադիլ	42
Քարագլուխ	36
Սևահող	27
Վարդանաշէն	25
Ընդամենը	250 տ.
d) Քէյվան (գաւառակ)	
Ղամաջէն	20
Գեօյթափա	40
Սարան	24
Բերդի	24
Սուրուն	24
Նորաշէն	24
Արշապ	12
Մկտաւ	9
Սղըն	35
Ընդամենը	210 տ.
Ընդամենը Ղարադաղում	1132 տ.
թ) Մակու	
Քիշմիշթափա	50
Դարաշամբ	40
Թադէօս Առաքեալ	22
ժ) Մարաղա	220
ժա) Արդաբիլ	15

Հետևապէս հայ ազգաբնակութեան թիւն է	տուն
1) Թաւրիզ և շրջակայ	765
2) Սալմաստի գաւառ	2249
3) Խոյի	265
4) Ուրմիում և շրջակայքում	793
5) Բարանդուզի գաւառ	240
6) Սուլդուզի »	143
7) Միանդաբի »	122
8) Սուջ-Բուլաղ »	27
9) Ղարադաղ »	1132
10) Մակու և շրջակայք	152
11) Մարաղա	222
12) Արդաբիլ	15
Ամբողջ Ատրպատականում	6123 տուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐՁԵԱԼ ԱՒՏՕՆՈՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ

(Պատասխանի փոխարէն)

Նորից յարուցւել է առել աւտօնոմիայի հարցը. «Кавк. Сл.» թերթի № 182-ում զետեղւած են երկու յօդուած, մէկը նրա խմբագրի՝ պ. Սեմեօնովի («Թիւրքաց Հայաստանի վիճակի մասին»), միւսը պ. Մագիստրոսի («Թիւրքաց Հայաստանի ապագան» վերնագրով)։

Հայկական հարցի լուծման եղանակի նկատմամբ կայ սկզբունքային համաձայնութիւն երկու հեղինակների յօդուածների միջև։ Երկուսի համար էլ արդէն կասկած չը կայ, որ անկախութեան գաղափարը մեռնում է իր իրականացման վաղճանին, որ պատերազմի ընթացքը տարերայնօրէն ջուրն է նետել աւտօնոմիստների տենչանքները և որ հայկական հարցը, «Թիւրքաց Հայաստանի վերակազմման խնդիրը, ըստ երևոյթին, դադարել է միջազգային լինելուց, դառնալով բացառապէս ռուսական հարց։ Աննեկսիան սկսել է կատարւած փաստ դառնալ և միջազգային բուֆէրի կազմակերպութիւնը չը պիտի դրւի խաղաղութեան կոնգրէսի ծրագրի մէջ» (Սեմեօնով)։ Նոյն միտքը, աւելի համարձակ ու համոզւած տոնով, արծարծում է պ. Մագիստրոսը, որի համար «հայկական աւտօնոմիան եղել է միշտ ուտօպիա»։

Երկու հեղինակների պնդումների մէջն կայ մի ձևական տարբերութիւն։ Պ. Սեմեօնովի կարծիքով, ինքը՝ իրերի օբիեկտիվ ընթացքն է, որ պատերազմի երկու տարւայ շրջանում վերացրել է աւտօնոմիայի իրականացման որևէ հնարաւորութիւն և բարձրացրել աննեկսիայի իրականացման շանսերը։ Բայց և այնպէս պ. Սեմեօնովը չի հրաժարւում իր ընթերցողների շահագրգռւած հասարակութեան մի փոքրիկ պլատօնական մխիթարութիւն հաղորդելուց, որ «հայկական հարցը գուցէ դրւի խաղաղութեան կոնգրէսին, որովհետև գոյութիւն ունեն միջազգային փոխադարձ պարտաւորութիւններ հայերի նկատմամբ»։

Այլ է պ. Մագիստրոսը։ Նա իր համարձակ և անվերապահ պնդումների մէջ գործ է ածում այնպիսի կրքոտ լեզու և, թող ների մեզ ասել, տենդենցիոզ ու չարախնդաց տոն, որ, կարծես, նա ողջ հոգով ուրախ է, որ «հայկական աւտօնոմիան» ջուրն է նետւում։ «Իւրաքանչիւր փորձ,—ասում է նա—կոնգրէսում ռուս կառավարութեան վրա «ճնշում» գործ դնելու համար յօգուտ հայկական աւտօնոմիայի՝ առաջ կը կոչէ արդարացի վրդովմունք իւրաքանչիւր պետականօրէն մտածող և հայրենասիրաբար տրամադրւած ռուս մարդու մէջ, և իրաւ ոչ միայն դաշնակից կառավարութիւնների դէմ, այլև ամենից առաջ նրանց (կարգին հայ գործիչների) դէմ, որոնք կանգնած են դաշնակիցների ետև»։

Պ. Մագիստրոսի այս խօսքերը թողնում են աչքակոյժեան ռուսի իմպերիալիստական ժարգոնի տպաւորութիւն։ Պ. Մագիստրոսի համար, ինչպէս տեսնում էք, հայկական աւտօնոմիան ոչ միայն անհնարին է՝ ուտօպիա լինելու չափ, այլ և անցանկալի է. և իրաւ՝ անցանկալի ոչ թէ հայ ժողովրդի շահերի տեսակէտից, այլ պետականութեան գաղափարի և պատրիոտիզմի տեսակէտից։

Շտապում ենք պ. Մագիստրոսին յայտնել, որ մենք առաջինն ենք եղել հայերի մէջ, որ դեռ պատերազմի սկզբին՝ 1914 թ. նոյեմբերին Պետրոգրադում կարդացած մեր մի զեկուցման մէջ ամենայն որոշութեամբ արտայայտւել ենք հակառակ աւտօնոմիայի*)։ Այդ այն ժամանակն էր, երբ չը կար հայկական կոտորած, կովկասահայերը վարդագոյն յոյսերով էին դիմաւորում թիւրքահայերի մօտալուտ ազատարար ապագային, իսկ աւտօնոմիայի հարցը կազմում էր ամենահրատապ թէման հայ թերթերի էջերում։ Բայց մենք սար ու ձորով հեռու ենք պետական իմպերիալիզմի այն ծայրայեղութիւնից, որ մատնում է պ. Մագիստրոսը իր յօդուածի մէջ, չը նայելով որ մենք ևս գերադասել ենք աննեկսիան և անհնարին համարել աւտօնոմիայի իրականացումը։ Բայց մենք ոչ միայն տրտունջ ու բողոք կամ «негодованіе» չենք արտայայտի, եթէ, հակառակ սպասածների և տուեալների, մի գեղեցիկ օր իրականանայ Հայաստանի աւտօնոմիան, այլև կարտայայտենք մեր գոհունակութիւնը դրա առիթով, իբրև կատարւած փաստի, որովհետև ճնշւած ժողովուրդների ազգային-կուլտուրական ստացուածքների ազատ զարգացման լաւագոյն գրաւականը եղել է միշտ և կը մնայ աւտօնոմիան։

Եթէ մենք աննեկսիան գերադասել ենք աւտօնոմիայից՝ թիւրքահայերի վիճակի տնօրինման խնդրում, ապա ոչ այն պատճառով, որ մենք առ հասարակ գերադասել ենք աննեկսիան աւտօնոմիայից, որպէս ազգային հարցի լուծման մեթօդ, այլ պարզապէս հետևեալ պատճառով. մենք ասել ենք և ասում ենք այժմ աւելի համոզւած որ հայկական աւտօնոմիա ասածդ՝ Թիւրքաց Հայաստանի փէշերում՝ չի կարող տևական ու ապահով ապագայ ունենալ։ Ցաւում ենք, որ արդի պայմանները հնարաւորութիւն չեն տալիս աւելի ընդարձակ և փաստերով հիմնաւորելու մեր այդ թեզիսը։ Ասենք առ այժմ միայն այս. հայկական աւտօնոմիայի իրականացումը ոչ թէ վերջնականապէս կը լուծէ հայկական պրոբլեմը, այլ վերջինս կը կերպարանափոխէ միայն իր բնոյթը, իր զարգացման մի փազիսից անցնելով միւսը։ Իրաւական տրակտատը չի կարող բէալ գրաւական և հաստատուն կռուան ծառայել՝ հայկական աւտօնոմիայի գոյութեան հիմքերը անխախտ ու տևական դարձնելու համար։ Կարճ ժամանակի ընթացքում նոր աստիճանական կլանումների օբիեկտ կը դառնայ ինքնավար Հայաստանը իր հարևան մեծ պետութեան կողմից և այնուհետև նորից կը սկսէ եռալ ու յուզել մթնոլորտը հայկական հարցը՝ իր որոշ կերպարանափոխութիւններով։

Ահա ինչու գերադասում ենք մենք աննեկսիան աւտօնոմիայից, ելնելով բացառապէս հայ ժողովրդի շահերի տեսակէտից։ Աննեկսիան կը վերացնէ հայկական հարցի նախկին սուր բնաւորութիւնը և հայութեան ցիր հատուածներին համախմբելով մի պետութեան փէշերի տակ, այնտեղ կը որոնէ ու կը հիմնէ հայկական կոլլեկտիվը իր բարեկեցիկ կեանքը և ազգային-կուլտուրական վերածնութիւնը։

Բ. Իշխանեան

---

*) Պ. Սեմեօնովը սխալւում է, երբ գրում է, որ հայերի մէջ աւտօնոմիստների տեսակէտը չը բաժանող փոքրամասնութիւնը չի արտայայտւել։ Մեր զեկուցման բովանդակութիւնը տպւած է իր ժամանակին «Մշակում» և ռուս թերթերում։ Միլիւկովը յիշում է իր «Мой отвѣтъ армянской печати» վերնագրով յօդուածում մեր տեսակէտը, ցոյց տալով հայ աւտօնոմիստներին, որ հայերի մէջ ևս կան աննեկսինիստներ, առանց հայ ժողովրդի մատնիչ կամ դաւաճանը լինելու։

Հաշւելով իւրաքանչիւր տան վրա հինգ հոգի, Ատրպատականի հայ ազգաբնակութեան թիւը կը լինի	30,615 հոգի
Եթէ վեց հոգի	36,738 »
Աւելի ճշմարտանման մօտ	33,000 »

Վիճակագրական այս թւերը ցոյց են տալիս թէ Ատրպատականի հայութիւնը 15 տարւայ ընթացքում համարեա չի աճել։ Եւ այս երևոյթը հետևանք է հայերի տնտեսական-իրաւական դրութեան։ 1914 թւի դեկտեմբերեան նահանջից յետոյ այս վիճակագրական տեղեկութիւնները, ի հարկէ, որոշ փոփոխութեան ենթարկւեց։

Հայերի դրութիւնը կարող էր բարւոքւել որևէ հարևան կուլտուրական պետութեան (Ատրպատականի հայերի համար—Ռուսաստանի) ազդեցութեան աստիճանական զարգացմամբ։ Սակայն պարսկահայերը պարսկական յեղափոխութեան մէջ եռանդուն մասնակցութիւն ցոյց տուին, հաւատալով որ սահմանադրական ռէժիմը արմատական փոփոխութիւնների ենթարկելով պարսկական պետական կեանքը՝ կը բարելաւի և իրանց անտանելի իրաւական-տնտեսական վիճակը։ Սխալ է այն կարծիքը, թէ հայերի մասնակցութիւնը պարսկական յեղափոխութեան մէջ հիմք չունէր. անկասկած հայերի դրութիւնը Պարսկաստանում պահանջում էր եռանդուն մասնակցութիւն ցոյց տալ ամեն մի շարժման, որ կարող է բարեփոխել պարսկական իրականութիւնը։ Բայց հայերի մասնակցութիւնը պարսկական շարժման ունենալով իր խոր պատճառները՝ չը պիտի կարողանար բարւոքել նրանց դրութիւնը։

Պարսկահայերը, համարելով պարսկական շարժումը ազատագրական և դնելով նրա վրա մեծ յոյսեր, վերջում հիասթափւեցին։ Մասնակցելով երկրի շարժումներին պարսկահայերը ի նկատի չունէին երկու հանգամանք, որ տեղի ունեցող յեղափոխութիւնը ազատագրական բնոյթ չունի և որ Պարսկաստանի միջազգային և ներքին դրութիւնն անկարելի է դարձնում այդ երկրի վերածնութիւնը գոնէ առ ժամանակ։

Պարսկական շարժումը ամենևին չի կարելի համեմատել ֆրանսիական, ռուսական և ուրիշ յեղափոխութիւնների հետ, որովհետև վերջիններս համապատասխանելով այդ ազգերի պատմական ընթացքին՝ իսկապէս ազատագրական շարժումներ էին։

Ռուսաստանը իր նախկին ամբողջ պատմութեամբ արդէն պատրաստ էր սահմանադրական կարգերի անցնելու—պաշտպանողական մաքսային քաղաքականութեան շնորհիւ երկրում զարգացող արդիւնաբերութիւնը և բուրժուազիան, երկրի կուլտուրական առաջադիմութիւնը, իշխանութիւնների բաժանումը և ապա 60-ական և 70-ական թւականների ռէֆօրմները՝ ճորտութեան վերացումը, տեղային ինքնավարութիւնը, դատաստանական ռէֆօրմը, կուլտուրական բարենորոգումները և այլն, այս բոլորը հող էին պատրաստել սահմանադրական ռէժիմի համար։ Ռուսաստանի հակապատկերն էր ներկայացնում Պարսկաստանը։ Միջնադարեան ֆէօդալական կարգերը, նախնական տնտեսութիւնը, օրէնսդրական, դատաստանական և գործադիր իշխանութիւնների միացւած դրութիւնը, երկրի կուլտուրական յետամնացութիւնը, շահերի դեսպոտիզմը՝ բոլորովին աննպաստ պայմաններ էին որևէ ազատագրական շարժման համար։

Ե. Շ.

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԻԲՐԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ

I

Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը հեռացաւ պաշտօնից, և ուրիշ նոր առաջնորդ է գալու։

Արժէր որ Մեսրոպ եպիսկոպոսի առաջնորդական գործունէութեան մասին լինեն հրապարակական գնահատումներ։

Մեսրոպ եպ. ահա լրիվ 4 տարի է վարում էր Վրաստանի և Իմերէթի այս մեծ թեմը. չորս տարին արդէն լիուլի բաւական է մի իշխանաւորի համար՝ արտայայտւելու և ցոյց տալու իր գոյնը, իր արժէքը, իր աշխարհահայեացքը, իր վերաբերմունքը մեր ազգային, եկեղեցական, դպրոցական, հասարակական և այլ հարցերի նկատմամբ և ցոյց տալու իր կարողութիւնը, գործելու ունակութիւնը այդ հարցերի հանդէպ, իր գլուխը ճանաչեցնելու. և գործունէութեան այդ տարիները կարող են լիովին իրաւունք տալ մեզ գնահատելու և որոշ կարծիք յայտնելու Մեսրոպ եպիսկոպոսի առաջնորդութեան մասին։ Անշուշտ մեր ասելիքը մեր անհատական ըմբռնումն ու գնահատութիւնն է լինելու։ Եւ ցանկալի է, որ ուրիշներն էլ արտայայտւեն այս մասին, հերքեն ու լրացնեն մեր այս գնահատութիւնը։

Մեսրոպ եպիսկոպոսը իր պատրաստութեամբ, կրթութեամբ ու եռանդով աչքի ընկնող անդամներից է Էջմիածնի միաբանութեան մէջ։ Վրաստանի թեմը իրաւունք ունէր նրանից սպասելու շատ բան, և թեմը ընդունեց մեծ յոյսերով ու ակնկալութիւններով. բայց Մեսրոպ եպիսկոպոսը չարդարացրեց շատերի յոյսը, թէև պէտք է ասենք, որ հէնց սկզբից նրան ճանաչողները նոյն բարի ակնկալութիւններով չէին ողջունում։

Ամենամեծ թերութիւնը, որ նկատելի եղաւ նրա գործունէութեան մէջ հէնց սկզբից, այն էր, որ նա եկաւ առանց որևէ ծրագրի։ Բօպէի թելադրութեամբ նա սկսեց անել-գործել։ Ժամանակն էլ բերեց շատ անակնկալներ, և ահա անսիստեմ և անծրագիր մի առաջնորդ, տարւած ժամանակի բերած սուր կարիքներով (և դա պէտք է լինէր), պատահականութիւնն ու անսիստեմ կառավարութիւնը աւելի ու աւելի երևան եկաւ, որից ընթացիկ գործերը մնացին միանգամայն երեսի վրա, իսկ կատարած գործն էլ երբեմն անախորժ, չը կշռադատած՝ եղաւ վնասակար, քան օգտակար։

Ուրեմն Մեսրոպ եպիսկոպոսի գործունէութիւնը, իբրև Վրաստանի առաջնորդ, բաժանում ենք երկուսի. նախ իբրև առաջնորդ թէ օրէնքով և պաշտօնով և թէ տրադիցիայով նրան տրւած պարտականութիւնների ու իրաւունքների նկատմամբ նրա բռնած դիրքն ու գործունէութիւնը, և երկրորդ՝ այս մեծ պատերազմի պատճառով հայութեան բաժին ընկած անօրակելի աղէտի հանդէպ նրա բռնած դիրքն ու կատարած գործը։ Մենք սկսենք հէնց երկրորդից, թէ ինչ դիրք բռնեց առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը ներկայի նկատմամբ։

Ոչ մի հայի ներելի չէր անտարբեր մնալ այս աշխարհաւեր աղէտի դիմաց, ուր մնաց մի առաջնորդ։ Եւ իրօք՝ անտարբեր չը մնաց և Մեսրոպ սրբազանը։ Նա նետւեց գործի մէջ ամենայն եռանդով, բայց արաւ ու գործեց կրկին շփոթ, անծրագիր, անսիստեմ, չը մտածւած ու չը կշռադատւած. գործեց շատ անգամ իր հասկացածով. և վատ էր վերջանում. շատ անգամ էլ լսում ու հետևում ուրիշներին, և այդ դէպքում աւելի վատ էր վերջանում։ Բայց մի բան պէտք է շեշտենք, որ մինչ շատ շատերը գործին մօտենում էին որևէ հեռաւոր, անհատական նպատակով, կամ որևէ անձնական կամ կուսակցական նկատումով, Մեսրոպ եպիսկոպոսը այս աղէտաբեր օրերի բերած հարցերով զբաղւելիս՝ գործին մօտենում էր միմիայն մաքուր դիտաւորութեամբ։ Արաւ շատ բան, բայց օգուտը շատ քիչ ստացւեց. գուցէ և վնաս։ Հեռու չը գնալու համար՝ այս դառն օրերին կատարւած գործերին մասնակցող թէ առաջնորդի և թէ այլոց գնահատութիւնը թողնենք։ Այսքանը ասենք, որ խելացի առաջնորդը աւելի խելացի մասնակցութիւն պէտք է ունեցած լինի. և Մեսրոպ եպիսկոպոսը պէտք է անէր աւելի մտածւած քայլեր։ Շատ անգամ բօպէի յանկարծակիութիւնը գործողներին սխալների մէջ է ձգում, և մաքուր հաշիւներով մասնակցող մարդն էլ աղէտի ժամանակ սխալներ է անում, ուր մնաց անսիստեմ և ոչ մի ծրագիր չունեցող գործողը։

Բայց ինչ արաւ Մեսրոպ եպիսկոպոսը չորս տարւայ ընթացքում իր բուն առաջնորդական գործերի, սովորական ընթացիկ հարցերի նկատմամբ։

Ա. Ս.—Տ.

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Կաղզւանից հեռագրում են Հայ կենտր. կոմիտէին, որ այնտեղից անցել են 5000 փախստական։

Պապաջանեանը հեռագրում է հայոց կազմակերպութիւններին, որ Մոսկւայում փախստականներին օգնելու կենտրոնական կոմիտէ հաստատելու նախագիծը քննւում է ներքին գործերի մինիստրութեան մէջ։ Այդ առիթով մինիստրութիւնը բանակցութիւններ է ունեցել Փոխարքայի քաղ. մասի օգնական իշխ. Օրլովի հետ։

Երևանի նահանգապետը հեռագրում է գեն. Թոմաշևսկուն, որ ինքը շրջել է փախստականների երևացած ամբողջ շրջանում և պարզել է, որ փախստականները շարունակում են խմբերով գալ Կարսի շրջանից, Ախչայ գիւղի միջով, ուր հաստատւած է բէյրարան և հաց է բաժանւում։ Ախչայից մինչև Իգդիր, 80 վերստի վրա, ոչինչ չը կայ շինւած, և փախստականները գնում են ծանր դրութեան մէջ։

Նահանգապետը առաջարկում էր, որ Քաղ. Միութիւնը անմիջապէս սննդակայաններ բանայ Կողբում և, եթէ հնարաւոր է, Կողբի և Ախչայի միջև։ Նոր եկող փախստականները տեղաւորւում են Սուրմալուի գաւառում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մոսկւայի շաքարի կենտրոնական ընկերութիւնը քաղաքային վարչութեանը մինչև նոյեմբերը բաց է թողնելու 50,000 պուդ շաքարաւազ։ Վարչութիւնը նոյեմբերին խնդրելու է ևս 50,000 պուդ։

◆ Քաղ. վարչութիւնը մի առաջարկութիւն ստացաւ ոմն Բաղայևից, որով վերջինս խոստանում է Թիֆլիսի ազգաբնակութեան կարիքների համար Պարսկաստանից մատակարարել 20,000 գլուխ անասուն։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Մ. Ջարարը յայտնեց Շաշկովսկուն, որ ստեղծւած աննպաստ պայմանների պատճառով ինքը յանձն չի առնելու ոչ մի պատասխանատւութիւն ազգաբնակութեանը պարէն հայթայթելու հնարաւոր հետևանքների մասին։

◆ Ոստիկանապետը բացեց շաքարաւազի սպեկուլեացիա։ Այդ շաքարաւազը շատ բարձր գներով ծախում էր տեղական վաճառականների մի խումբ՝ Հաջի Ռախմանովը և Յարութիւն Սէյլանեանը հրեայ Բադոլինի ընկերակցութեամբ։ Այժմ Կովկասի զինւոր. շրջանի գլխաւոր պետի կարգադրութեամբ առաջին երկուսը արտաքսւում են Կովկասի զինւորական շրջանի սահմաններից դուրս։ Իսկ Բադոլինը աքսորւել է առաջուց։ Անցեալներում տեղական թերթերը հաղորդեցին, որ Յ. Սէյլանեանը անդամ է թանգութեան դէմ կռւող քաղաքային յանձնաժողովի, որի նպատակն է ամեն միջոցով կռւել մթերքների թանգութեան դէմ...

◆ Քաղ. վարչութիւնը էլեկտրաքարշի բոլոր վագոններում կախել է յայտարարութիւն հետևեալ բովանդակութեամբ՝ 1) Վագոնի առաջին մասում 5 տեղ կայ, որից մէկը ոստիկանի կամ պօստատարի համար. 2) Երկրորդ մասում 10 տեղ. 3) Վագոնի ներսում 5-րդ ուղևորը կարող է տեղ բռնել միայն նստողների թոյլտւութեամբ. 4) Խստիւ արգելւում է կանգնել վագոնի աստիճանի վրա կամ կախ ընկնել վագոնից։ Էլեկտրաքարշի վարչութիւնը առաջարկում է կոնդուկտորներին և վատմաններին խիստ կերպով հսկել յայտարարութեան կէտերը կատարելու վրա։ Իսկ էլեկտրաքարշի վերահսկիչներին յանձնւած է հսկել կոնդուկտորների և վատմանների խախտումներին, որ կը լինեն յայտարարութեան շուրջը։

◆ Մինչև այժմ էլեկտրաքարշի վրա կոնդուկտորի պաշտօնի համար ընդունւել են արդէն 80 կին։ Սրանցից 20-ը աչքդ քննութիւններ են տուել։ Այս կին-պաշտօնեաների համար պատրաստւում է առանձին նշանազգեստ.—կապոյտ շրջազգեստ, տղամարդու բաճկոն և կոնդուկտորական սովորական գլխարկ։ Քաղաքային վարչութեան և թէ էլեկտրաքարշի դիրեկցիայի մէջ շատ գոհ են կանանց ծառայութիւնից։

◆ Էլեկտրաքարշի դիրեկտոր Թախթաճեանը երկու ամսւայ արձակուրդով մեկնեց քաղաքից։ Նրան փոխարինում է Դ. Ղորղանեանը։

◆ Նահանգապետը հաստատեց Թիֆլիսի արհեստաւորաց սպառողական ընկ. կանոնադրութիւնը։ Ընկ. հիմնադիրներն են Ի. Զ. Տէր-Ստեփանեան, Վ. Վաշակիձէ, Ս. Սահակեան, Ի. Եա. Մզարկուլով, Կ. Փեյխելաուրի և ուրիշներ։ Ընդունւում են անդամներ 11 ր. անդամավճարով։

◆ Կառապանները խնդիր են ներկայացրել քաղ. վարչութեան, որտեղ յայտնում են, որ այլևս դարման չի բերւում քաղաք և իրանք ստիպւած են մարդիկ ուղարկել գիւղերը դարման գնելու։ Դարմանը գիւղերում ծախւում է պուդը 50—60 կոպէկ։ Թիֆլիսում դարմանի սակագինն է 40 կոպէկ։

◆ Օգոստոսի 24-ին նշանակւած է պարէնաւորման խորհրդակցութիւն՝ սակագինը քննելու և այնուհետև ազգաբնակութեանը պարէն հայթայթելու համար։

◆ Կովկասեան թանգարանի գրադարանապետ Շմիդտ և թանգարանի աւագ պահպանող Պֆիցենմայեր արձակւեցին իրանց պաշտօններից։

◆ Թիւրքական նորանուաճ շրջանների զինւորական նահանգապետը հաղորդում է Քաղ. Միութեան կովկասեան կոմիտէի լիազօրին, որ զօրքերի բանակած տեղերի ազգաբնակութիւնը պարէնի խիստ կարիք է զգում, առանձնապէս ալիր։ Երեխաները մեռնում են սովից։ Անհրաժեշտ է անյետաձգելի օգնութիւն, հակառակ դէպքում ազգաբնակութեան մէջ առաջ կը գան տիֆ, խոլերա և ուրիշ հիւանդութիւններ։

◆ Օգոստոսի 18-ին նահանգական բանտից փախան երկու կալանաւոր, որոնք դատապարտւած էին տաժանակիր աշխատանքների։ Դրանք են Գէորգ Բալթաչեան և Բրոնիքլաւ Կիրկլ։

◆ Հայ զօրականներից սպանւել է պօդպօրուչիկ Սարգիս Կ. Վալեան, վիրաւորւել են—պրապօրշչիկներ՝ Սարգիս Աղաւեան, Սարգ. Յակ. Սարգսեան, Գր. Զաւր. Գրիգորեան։ Վնասւել են պրապօրշչիկներ՝ Ռուբէն Զալալեան, Գէորգ Գ. Ստեփանեան, Արամայիս Ս. Քոչարեան։

◆ Օգոստոսի 17-ին № 40 հիւանդանոցում կային խոլերայով հիւանդներ 44 հոգի և խոլերայով կասկածելի 7։

◆ Վրիպակ.—«Հայաստանի ապագան» յօդուածում մի քանի սխալների հետ սպրդել է և հետևեալ սխալը՝ յօդուածի վերջում։ Տպւած է. «ուժեղ ժողովրդին, որ չէ ցանկանում մեռմել...»։ պէտք է լինի—չէ ցանկանում մեռնել...

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԱՆՊԱՏՐԱՍՏ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ամեն տարի յուլիս ամսի սկզբներին Վաղարշապատի շրջանում ծառերը սկսում են տերևաթափ լինել, նոյնպէս և խաղողի այգիները թառամում են, իսկ արօտախոտի մասին խօսելը աւելորդ է. դաշտ դուրս եկող անասունները խոտի փոխարէն աւազ են լիզում։

Ջրի սակաւութիւնից է առաջանում այդ չորութիւնը. Ջրի առատացման մասին խօսում են քառասուն տարուց աւելի, բայց գործի անցնելը դեռ հեռու է իրականանալուց։

Եթէ ջուրը առատացնելու խնդիրը վաղարշապատցիք վեր են համարել մինչև այժմ իրանց ոյժերից, գոնէ պիտի աշխատէին մտցնել այնպիսի բոյսերի մշակութիւն, որոնք կարողանային հասունանալ մինչև ջրի սակաւանալու շրջանը, որ տեղի է ունենում յունիս ամսի վերջերին կամ յուլիսի սկիզբներին։ Պէտք է ցանել փոխփոխ ցորեն, լոբի, գարի, սիսեռ և ուրիշ նման բոյսեր, որոնք շուտ են հասունանում, առատ բերք են տալիս և լաւ գնով ծախւում։

Բամբակի մշակութիւնը, որին ներկայումս ընդարձակ տարածութիւն են յատկացնում, քանի որ ջրի խնդիրը չէ լուծւել, բոլորովին պէտք է դուրս հանել կամ քիչ ցանել, հանդը որոշ մասերի բաժանելով։ Դրանով ջրի եղած սակաւ քանակութիւնն էլ հնարաւոր կը լինի խելացիօրէն օգտագործել, որով բոլորն էլ բաւարարւած կը լինեն։

Ցանքի վերոյիշեալ ձևից դուրս վարւելը այս շրջանում պրակտիկապէս վնասաբեր կը լինի, որի փորձը վայելել են Վաղարշապատի բոլոր հողագործները։

Ի՞նչ միտք ունի ցանել մի բոյս, որի մշակութիւնը մեծ ծախս է պահանջում և ջրչորութիւնից պտղաթափ լինելով՝ արդիւնք չէ տալիս, այլ լոկ նիւթական վնաս է պատճառում։

Գիւղատնտեսութեան մէջ անպատրաստ լինելն է, որ ամեն տարի կրկնւում է նոյն թշուառութիւնը, որից դուրս գալու հնարը չեն գտնում։

Անպատրաստ և ձեռներէցութիւնից զուրկ լինելն այս տարի կրկնակի զգալի եղաւ այս շրջանի ժողովրդի համար, որի դէմն առնելը առաջարկւեց երեք-չորս տարի առաջ, սակայն անտարբեր վերաբերմունքի պատճառով զրկւեցին և ախ են քաշում այժմ, բայց ուշացել են, և ահա ինչպէս։

Հացաբոյսերի ցանքը մի կերպ քաղեցին, բայց տուն բերելը և կալսելը մեծ արգելքների է պատահել այս տարի։

Վաղարշապատցիք ընդհանրապէս կազմակերպւած հողագործներ չեն. սրանց վարը, ցանքսը, հունձը, նաև կրելն ու կալսելը կատարում էին Արարատի լեռնաբնակ հայերը, որոնց ցանքսը կլիմայական պատճառով ուշ է սկսւում։ Օգտւելով ազատ ժամանակից, արարատցիք իջնում էին դաշտային գիւղերը ամեն տարի, աշխատում վարձով և վերադառնում էին իրանց դաշտային աշխատութիւնները կատարելու, երբ բնականաբար ուշ է սկսւում։

Այս տարի արարատցիք չը կարողացան այդպէս վարւել, որովհետև երիտասարդները պատերազմի դաշտում զինւոր են, իսկ ծերունիները իրանց լծկաններով ու սայլերով զօրամթերք տեղափոխելով են զբաղւած, որի պատճառով վաղարշապատցիք անակնկալի հանդիպեցին իրանց ցանքերի վերաբերմամբ։

Վաղուց զգալի էր եղել, որ հացաբոյսի կրելը և կալսելը լծկանների պակասութեան պատճառով դանդաղ էր կատարւում և մեծ վնաս էր պատճառում երկրագործ դասակարգին, որի առաջն առնելու մտածողներ եղան։

Երկու բեռնակիր աւտօմոբիլ մի կալսող և մի դարման շինող մեքենայ մեծ ծառա-

Զրկինեանց եկեղեցու համար հարկաւոր են զինւորականութեան չենթարկւող
ԵՐԿՈՒ ՏԻՐԱՑՈՒ
և մէկ
ԺԱՄԿՈՉ
առատ արդիւնքներով։
Պայմանների մասին դիմել ինձ փոստով։
Գրիգորիս ա.-ք. Երզնկեանց
(Грибоѣдовская, 20)
760. 2—1

յութիւն կանէին այս ժողովրդին. վերջին երկու մեքենաներից բերելու համար մեծ ջանք գործադրեց երեք տարի առաջ Վաղարշապատի փոխատու խնայողական ընկերութեան նախագահ պ. Գերասիմ Տէր-Գրիգորեանը, որի բոլոր ջանքն ու աշխատանքը զուր անցան, նրան հասկացողներ չը լինելու պատճառով: Չը գտնվեցին գոնէ տասն հոգի, որ իւրաքանչիւրը երեք հարիւրական րուբլի բաժնեվճարով մասնակցէին, որով և գործը խանգարվեց:

Ի դէպ. մի երկու խօսք Վաղարշապատի փոխատու խնայողական ընկերութեան և նրա նախագահ պ. Գ. Տէր-Գրիգորեանի մասին: Ներկայումս բազմաթիւ ընկերութիւններ են գործում Երևանի նահանգում, որոնց մէջ իր օգտակարութեամբ, բարեխիղճ ու խիստ կանոնաւորութեամբ առաջին տեղն է բռնում Վաղարշապատի ընկերութիւնը, շնորհիւ եռանդուն գործունեայ և բարեխիղճ նախագահ պ. Գ. Տէր-Գրիգորեանի, որը վարչութեան անդամների հետ խիստ համերաշխութիւն և իրան կօռեկտ պահել գիտէ:

Նա գործում է լուիկ-մնջիկ, առանց աղմուկի և միանգամայն առանց շահասիրութեան. Նա աշխատաւոր գիւղացիների կարիքների հոգատարութեամբ խիստ տոգորվող մի անձն է:

Պ. Գ. Տէր-Գրիգորեանը առաջինը եղաւ այս շրջանում, որ ընկերութեան մէջ մտցրեց միջնորդ գործողութիւն, որով աշխատաւոր սպառողները հնարաւորութիւն էին ստանում էժան գնով առաջին ձեռքից նիւթեր ստանալու: Նա առաջինը եղաւ որ գրաւատութեան գործառնութիւն մտցրեց ընկերութեան մէջ, որով արդիւնաբերողը հնարաւորութիւն էր ստանում իր արդիւնաբերած նիւթերը միաժամանակ հրապարակ չը հանել վաճառքի և կիսագնով ծախել, որ սովորական է մեր արդիւնաբերողների մթերքների վերաբերմամբ:

Նա առաջինը եղաւ որ ուշ դարձրեց բուսական հիւանդութիւնների բժշկելու վերաբերմամբ՝ բերել տալով և տարածելով բուժիչ նիւթեր և սրանց վերաբերմամբ գործադրելու ապարատներ:

Դժբաղդաբար ընկերութեան բուն Վաղարշապատի անդամները չեն ըմբռնում այսպիսի կանոնաւորված ընկերութեան օգտակարութիւնը:

Այս ընկերութիւնից աւելի դրական կերպով օգտվում են մասամբ դրացի հայ գիւղացի անդամները, իսկ առաւելապէս՝ Թուրքերը: Սակայն շատ յարմարութիւն ունեն օգտվելու բուն վաղարշապատցի անդամները: Սրանք են, որ կարող են նեցուկ լինել ընկերութեանը աւելի ընդարձակելու բազմարդիւն դարձնելու գործում: Դժբաղդաբար հէնց սրանք են, որ սառեցնում և դալկացնում են ընկերութեան գործունէութիւնը և կեանքը:

Այս ընկերութիւնը շատ անշնորհք է նաև բարեխիղճ աշխատաւորներին վարձատրելու մէջ, որ մեծ գրաւական է ընկերութիւնը հաստատուն և բեղմնաւոր դարձնելու համար:

Մինչդեռ դրացի Ս-ի ընկերութիւնն իր նախագահին վճարում է 1200 ր., որը շատ հեռու է նախագահ կոչվելու արժանաւորութիւնից, հաշուապահին, գանձապահին և երրորդ անդամին, որ միայն կազմն է լրացնում, առանց որոշ պարտականութեան, վճարում է 900-ական րուբլի իւրաքանչիւրին, գրագրին վճարում է 600 ր., Վաղարշապատի ընկերութիւնը նախագահին վճարում է 600 ր., հաշուապահին 600 ր. և միւս ծառայողներին էլ չնչին ռոճիկներ է տալիս:

Այսպիսի վարմունքով Վաղարշապատի ընկերութիւնը մեռցնում է բարեխիղճ աշխատաւորի եռանդը, ջերմ վերաբերվելու զգացմունքը, որոնք երևի ստիպված կը լինեն հեռանալ ընկերութիւնից, որից յետոյ կը մնայ խաչ քաշել այդ օգտակար հիմնարկութեան վրա, որովհետև չէ կարելի պահանջել, որ մի երկու մարդ տանջվեն հազարաւորի համար և նիւթականապէս անապահով մնան:

Ցանկալի է, որ Վաղարշապատի ընկերութեան անդամները ուշաբերվեն, լաւ վարձատրութեամբ շահագրգռեն բարեխիղճ ծառայողներին, հակառակ դէպքում իրանք կը տուժեն, որպէս պատահել է ուրիշ ընկերութիւնների հետ:

Ե. Խօջաէյնաթեան

Վաղարշապատ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Երէցփոխի եւ հոգաբարձական ընտրութիւն

Կօջօր, 14 օգոստոսի

Այսօր պատարագից յետոյ, համաձայն լրագրական յայտարարութեան, տեղիս ս. Կարապետ եկեղեցում կայացաւ ծխական ժողով՝ ընտրելու նոր երէցփոխ, հնի ժամանակամիջոցը լրացած լինելու պատճառով, և նոր բացվելիք եկեղեցական դպրոցի համար էլ ծխական հոգաբարձուներ: Ժողովը նախագահ ընտրեց գործակալ Սարգիս ս.-ք. Շիրայեանցին, որը խօսեց եկեղեցու անհրաժեշտ բարեզարդութեան խնդրի և նոր բացվելիք ծխ.-դպրոցի շուրջը, յայտնելով որ ժողովի հրատապ խնդիրներից մէկը հանդիսանում է նոր բացվելիք դպրոցը, որ յիշատակութեան արժանի մի կենդանի գործ է և որի հիմնարկութեան միտքը դեռ վաղուց յղացել էր ինքը. և ահա այսօր, շնորհի բարեմիտ անձանց աջակցութեան, նպատակին հասած պէտք է համարել:

Ժողովը երէցփոխի պաշտօնի համար վերընտրեց պ. Գր. Մալինեանցին, իսկ վերջինիս օգնական՝ տիկ. Մ. Միլեանցին:

Հոգաբարձուներ ընտրվեցին կոյս Հռիփ. Թայիրեանց, Եղ. ս.-ք. Երզնկեանց, պ. պ. Գր. Մեամիկեանց (որը խոստացել է նպաստել եկ. դպրոցի պահպանութեանը, յատկացնելով տարեկան 360 ր.) և Գր. Ստեփանեան:

Բ. Բերինեան

ՄԱՄՈՒԼ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼ

Ինչպէս, անշուշտ, յայտնի է մեր ընթերցողներին, վերջին տարիներս բարձր բիւրոկրատական շրջաններում միտք է ծագել ստեղծել մի նոր մինիստրութիւն, որի նպատակը պիտի լինի բարելաւել և կանոնաւորել ժողովրդեան առողջապահութեան գործը: Այդ մինիստրութիւնը հիմնելու հարցը մի քանի անգամ արծարծվել է և ապա քնեցվել ու հետաձգվել անորոշ ժամանակով: Այժմ այդ հարցը նորից հրապարակի վրա է դրված: Ռուս առաջադէմ տարրերը հէնց սկզբից յոռետեսութեամբ ընդունեցին հիմնվելիք մինիստրութեան գաղափարը, քանի որ աւելի նպատակայարմար է գտավում առողջապահութեան գործը դնել հասարակական հիմքերի վրա և ոչ բիւրոկրատիական:

«Рус. Вѣд.» թերթը հետևեալ տողերն է նուիրում այդ հարցին.

Վերջին ժամանակներս, օրէնսդիր հիմնարկութիւնների նստաշրջանը փակվելուց յետոյ, «առողջապահութեան» մինիստրութիւն հիմնելու հարցը իր պաշտպանների աչքում անսպասելի կերպով ստացել է անյետաձգելիութեան բնաւորութիւն: Այդ հարցի մասին սկսել են խօսել աւելի յամառ կերպով, քան երբևիցէ, և լրագրութեան մէջ մինչև իսկ տեղեկութիւններ երևացին այն մասին, թէ այդ հարցը շուտով կը լուծվի հիմ. օրէնքների 87-դ յօդուածի կարգով: Բայց և այսու հանդերձ հասարակական լայն խաւերի համար մինչև օրս էլ միանգամայն անյայտ է մնում, թէ ով է բարձրացրել այդ հարցը, ինչ ձևով է նա մշակվել, պետական կամ հասարակական որ հիմնարկութիւններից է նա աջակցվել և, վերջապէս, ինչու՝ դիւանատների խորխորատներում տարիներով մնալուց յետոյ, այդ հարցը այսչափ անսպասելիօրէն ճանաչվում է իբրև անյետաձգելի:

Անորոշութեան մշուշի մէջ, որով շրջապատված է այդ հարցը, կայ միայն մի անպայման պարզ և որոշակի կէտ: Դա այն կէտն է, որ գոյութիւն ունի «առողջապահութեան» մինիստրութեան նախագծի և բժշկական խորհրդի նախագահ պ. Րէյնի անուան միջև: Կառավարութիւնը մի քանի անգամ փոխել է իր կազմը, մինիստրները փոխարինվում էին, յաջորդում էին տարբեր քաղաքական «կուրսեր» սակայն յիշեալ նախագծի վիճակի խնամատարութիւնը անփոփոխ մնում էր պ. Րէյնի ձեռքում: Նա անդուլ կերպով մշակում էր, այդ նախագիծը անց էր կացնում զանազան յանձնաժողովների և խորհրդակցութիւնների բովից և յամառօրէն առաջ էր քշում այն: Իսկ միւս կողմից, երբ հանդէս էին բերվում ենթադրութիւններ նախագծվող հաստատութեան կազմի մասին, նախ և առաջ առաջ էր քշվում նոյն պ. Րէյնի անունը: Վերջ ի վերջոյ ստացվեց մի տպաւորութիւն, որ յիշեցնում է յատկապէս որոշ դերասանին դեր տալու համար գրված պիէսի մասին:

Կարող են ի հարկէ առարկել թէ առողջապահական մի ուրոյն հաստատութեան գաղափարը ունի իր օբիեկտիվ արդարացումը՝ անկախ անձնական կարծիքներից և պատահական կոմբինացիաներից, թէ յօգուտ նրա բարբառում են հանրայայտ փաստերը, որոնք բնոյթագրում են Ռուսաստանի յետամնացութիւնը հանդէպ արևմուտքի հասարակական առողջապահութեան գործում: Այդ փաստերը հարկաւ անհերքելի են. Ռուսաստանի ժողովրդական առողջապահութեան գործում աշխատողների համար բացվում է դեռ ևս ամենալայն ասպարէզ: Բայց այս հանգամանքը բացարձակօրէն ոչ մի հիմք չէ տալիս ենթադրելու, որ այս բնագաւառում ցանկալի հետևանքների յանգելու համար ամենաճիշդ և ամենակարճ ճանապարհն է նոր մինիստրութիւն ստեղծելը:

Ապա խօսելով այն մասին թէ այլ երկիրների, ինչպէս, օրինակի համար, Ֆիլիպպեան կղզիներում գործող ամերիկեան առողջապահական միսիայի, օրինակը չէ կարող համոզեցուցիչ լինել, քանի որ ռուս բիւրոկրատիայի և ռուս քաղաքացու միջև եղած յարաբերութիւնները իւրօրինակ ուրոյն բնոյթ են կրում, թերթը աւելացնում է.

Հասարակական մեդիցինան և սանիտարիան իրանց պատմութիւնն ունեն մեզանում, և այդ գործի զարգացումը, գոնէ վերջին յիսնամեակում, հանդէս էր գալիս ոչ թէ վերևից, այլ ներքևից, ոչ թէ կենտրոնից այլ գաւառից: Այդ ուղղութեամբ եղած ամեն մի կարևոր գործ արված է հասարակական ույժերով՝ առանց բիւրոկրատիայի մասնակցութեան: Մեր զեմստվոյին մեդիցինան մեր հասարակական ստեղծագործութեան լաւագոյն պտուղներից մէկն է և որոշ չափով իրաւունք է տալիս մեզ հպարտանալու Արևմուտքի առջև... Ռուսաստանի առողջականացման ուղին իր հիմքում զուգադիպված է տեղական ինքնավարութեան ամրացման և լայնացման ուղիի հետ:

Կարծել, որ ժողովրդի առողջականացման հասարակական հոգատարութեան զարգացման բնական և պատմականօրէն հարթված ճանապարհը կարելի է փոխարինել սանիտարական բարեկեցութեան արագացրած պատուաստումով, այն էլ բիւրոկրատական միջոցներով, նշանակում է միանգամայն անտես անել իրերի ռէալ դրութիւնը:

Ապա թերթը գալիս է այն եզրակացութեան, որ այն պայմաններում, որոնց մէջ գտնվում են ռուս բիւրոկրատիայի և տեղական ույժերի յարաբերութիւնները, նոր մինիստրութիւնը մատնված կը լինի չափազանց տարտամ վիճակի և պիտի հանդիսանայ արհեստականօրէն ստեղծված մի զսպանակ, որ գալիս է ճնշելու հասարակական նախաձեռնութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԻՄ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ «ՀՈՎԻՏԻ» ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ

Սամարղանդ, 8 օգոստոսի

Պ. Ն. Միրզաշիրը «Հովիտի» № 26-ում իր երկրորդ և աւելի երկայն յօդուածն է լոյս ընծայել «Պատասխան Ա. Ե. Մուրադեանին» վերնագրով:

Վերջին յօդուածի իւրաքանչիւր մի բառի մէջ երևում է պարոնի ջղայնութիւնը: Նա եթէ առաջին յօդուածով կատարեց կեղծանունը հրապարակելու չափ մի խոշոր յանցանք, վերջին յօդուածով՝ գլուխը կորցրած մարդու նման բացել է «Հովիտի» լեկսիկոնում պատուաւոր տեղ գրաւող ածականների էջերը:

Թող ընթերցողի յիշողութեան մէջ լաւ տպաւորվի պ. Ն. Միրզաշիրի այս տողերը.

«Ես միշտ այն կարծիքի եմ եղել, որ երբ հրապարակի վրա կայ մի հարց, որ վիճաբանութեան առարկայ է դարձել, պէտք է խօսել, վիճել միմիայն այդ հարցի մասին շեշտակի, առանց սար ու ձոր ընկնելու...»:

Պ. Ն. Միրզաշիրը ասում է, որ դա իր կարծիքն է. բայց ես կասեմ, որ դա իր դիմակն է: Եւ ես պիտի ապացուցանեմ այդ:

Սրանից մօտ 6 ամիս առաջ «Մշակի» խմբագրութեան ուղարկեցի «Հովիտի» № 2-ի առիթով գրած յօդուածս «Մեր կեղծաւոր փարիսեցիները» վերնագրով: Այդ յօդուածում ես գրել էի, որ «Հովիտը» իր համար արհեստ է շինել ազգային բոլոր դժբաղդութիւնները իր չը սիրած, իրան հակառակորդ մարդկանց վզին փաթաթելու տեղի կամ անտեղի, որ կրօնը, դաւանանքը անհատական խղճի գործ է, որ ազգային լեզուն, գրականութիւնը, պատմութիւնը կարելի չէ անհատական խղճի գործ համարել, որպէս կարծում է «Հովիտը», որ ազգային կրօն, դաւանանք գոյութիւն չունի, որ եկեղեցիներն անգամ կը դադարեն ազգային լինելուց, եթէ մէջտեղից վերցնենք ազգային լեզուները...

Եւ իմ այս մտքերն ապացուցանող օրինակներ էի բերել:

Ենթադրելով որ գործ ունեմ կարգին մարդկանց հետ, ոչ մի խօսք չէի ասել եկեղեցու կատարած դերի մասին ազգերի կեանքի մէջ, ոչ էլ այն մասին, թէ ինչպէս ազգային լեզուն ազգային դրոշմ է դնում եկեղեցու վրա, ինչպէս է նա ազգային գոյն ու ոգի տալիս:

Կրկնում եմ. այս հարցերով յօդուածս երկարացրի, ենթադրելով որ նախ՝ սրանք յարուցված հարցի հետ կապ չունեն և երկրորդ՝ գործ ունեմ խելացի գաղափարական մարդկանց հետ:

Ընթերցողները եթէ բարեհաճեն նորից կարդալու յիշեալ յօդուածս, կը տեսնեն, որ մասնաւոր հարցեր չեն շօշափված և ոչ էլ իմ անձն է այնտեղ ցուցադրված: Ինձ չէ հետաքրքրել և երբէք էլ չը պիտի հետաքրքրէ այն, թէ այս կամ այն միտքն արտայայտողն ով է, ինչ անցեալ ունի: Նոյնը և «Հովիտի» ու նրա պահեստի պաշտպանների մասին:

Սակայն «Հովիտը», որ տպել է իր աշխատակցի վերոյիշեալ տողերը, պ. Ն. Միրզաշիրը, որ շարադրել ու լոյս է ընծայել այն, փոխանակ իմ յօդուածին պատասխանելու ըստ էութեան, փոխանակ ապացուցանելու իմ կարծիքների սխալ լինելը շեշտակի, առանց սար ու ձոր ընկնելու, զբաղվում են միայն ու միայն իմ անձնաւորութեամբ, որը ոչ մի առնչութիւն չունի հրապարակի վրա եղող հարցի հետ:

Պ. Ն. Միրզաշիրը ոչ այնքան էլ զարմանալի հետևողականութեամբ «Հովիտի» մէջ հրատարակել է երկու երկայն յօդուածներ իմ այն յօդուածի առիթով, որի ամփոփ բովանդակութիւնը առաջ բերի քիչ վերը, ու իր ընթերցողներին պատմում է, թէ ես առաջ որ թերթումն էի գրում, ինչ կեղծանուններով և այլն և այլն:

Արդ, ինչ անուն տալ այդ ձևի պօլեմիկային. քննադատութիւն, պատասխան, թէ հրապարակախօսական խեղկատակութիւն:

Ես գաղտապահել էի պարոնին այն բանում, որ թոյլ է տուել իրան իմ կեղծանունները բանալու, մի բան, որ ոչ մի ազգի լրագրութեան մէջ ընդունված չէ: Սակայն «Հովիտի» աշխատակիցը ինքն իրան արդարացնելու համար շարունակ պնդում է, որ իմ կեղծանունները վաղուց են բացված: Եւ փոխանակ ապացուցանելու՝ կոչ է անում իմ յիշողութեան:

Բայց մի այդպիսի բան չէ պատահել:

Այնուամենայնիւ մի բանում ես համաձայն եմ պ. Ն. Միրզաշիրի հետ, այն է, որ՝ ըստ իր գրութեան՝ ինքը երկար աշխատակցում է «Հովիտին» և իրարից անշուշտ գոհ են: «Հովիտը» գոհ է, որովհետև աւելի լաւ պաշտպան չէր կարող գտնել. պ. Ն. Միրզաշիրն էլ գոհ է, որ չէր կարող աւելի լաւ դաշտ գտնել իր սերմերը ցանելու համար:

Սա իմ վերջին խօսքն է: Զանազան ու փեղցփեղութիւններին պատասխանելու ժամանակ չը կայ, ոչ էլ կարիք կայ:

Կան աւելի լուրջ հարցեր, կենսական խնդիրներ: Հայի թուլացած, վիրաւոր մարմնի շուրջը գիշատիչների երամն է սաւառնում: Մի ակնթարթ ևս և նա ծուխ-ծուխ կը լինի, կը յօշոտվի: Մենք մեր հոգու, մտքի ու զգացմունքների ամբողջ ույժով ու պաշարով ազգը ծուատումից փրկելու մասին պէտք է մտածենք, այլ ոչ թէ լրագրական խեղկատակութիւններին պատասխանելով ժամավաճառ լինենք:

Ա. Ե. Մուրադեան

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Երթեւեկութիւնը Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

Բագու № 6 արագ	11 ժ. 13 ր. առ.
» № 8 » լրաց.	3 ժ. 54 ր. ցեր.
» № 4 պօստատար	9 ժ. 28 ր. երեկ.
Բաթում № 3 »	11 ժ. 03 ր. առ.
» № 9 մարդատար	10 ժ. 33 ր. երեկ.
Երևան և Ջուլֆա № 4 պօստատար	11 ժ. 13 ր. երեկ.
Սարըղամըշ, զինւորական № 316/631 մարդատար	9 ժ. 48 ր. երեկ.

ԹԻՖԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ Է

Բագուից № 3 պօստատար	10 ժ. 08 ր. առ.
» № 7 արագ լրաց.	4 ժ. 12 ր. ցեր.
» № 5 »	8 ժ. 48 ր. երեկ.
Բաթումից № 3 մարդատ.	9 ժ. 52 ր. առ.
» № 4 պօստատար	8 ժ. 48 ր. երեկ.
Երևանից և Ջուլֆայից № 3 պօստատար	8 ժ. 10 ր. առ.
Սարըղամըշից, զինւորական № 648/299 մարդատ.	5 ժ. 13 ր. երեկ.

Ամառանոցային գնացքներ

Թիֆլիսից Բօրժօմ № 17	8 ժ. 27 ր.
տեղ է հասնում	2 ժ. 6 ր. ցեր.
№ 19,	3 ժ. 20 ր. երեկ.
» » »	8 ժ. 57 ր. երեկ.
Բօրժօմից Թիֆլիս № 18	5 ժ. 9 ր. ցեր.
№ 20,	1 ժ. 28 ր. գիշ.

Թաւրիզեան երկաթուղի

Ջուլֆայից Թաւրիզ	7 ժ. առաւ.
Թաւրիզից Ջուլֆա,	11 ժ. 30 ր. առ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւններ:
Ս. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—12—1 ժ. երկուշ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին հի. և ծաղկահատ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ն. ԻՍԱՀԱԿԵԱՆ—6—7 ժ. կանանց հ. և վիրաբուժական.
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

АЛЛЕНБЭРИСЪ
АНГЛІЙСКАЯ
СОЛОДОВАЯ ПИЩА
для грудныхъ дѣтей со дня
рожденія
№ 1 для возраста до 4 мѣс.
№ 2 » » » 7 »
Новѣйшая система
Прогрессивнаго вскармливанія
Получаются
БЛЕСТЯЩІЕ РЕЗУЛЬТАТЫ.
АНГЛІЙСКОЕ АКЦ. О-ВО.
„Алленъ и Гамбурисъ (Россія)".
Москва, Мясницкая, 32. Почт. ящ. 226.
(Гр. 33529) 12—12

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ եւ նախակրթարան
երկսեռ Օ. Նազարեանի և Ն. Գալեանի
Բացվում է Հալաբարում
Կօնստանտինօվսկայա, № 3 (հրապարակի մօտ). ընդունելութիւնը ամեն օր՝ ժամը 10—12-ը:
Պարապմունքները սեպտեմբերից: (ե. շ. կ.) 696. 5—1

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան
հովանաւորութեան ներքոյ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տելեֆօն № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից: Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից: Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից:
(ա. օ.) 632. 0—16

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից 1 ր. 50 կ.

1) Մանրանկարներ, Վրձին I և II հատորներ	40 կ.
2) Մի սիրու Ուրեւելֆում, Հ. Առաքելեանի	1 ր. 20 կ.
3) Հայկական տպագրութիւն, Լէօյի, հատոր I, երկրորդ տպագրութիւն	40 կ.
4) Դէպի Արարատ, Արշ. Մխիթարեանի	15 կ.
5) Արբեցողութեան դէմ	
6) Ձեռնարկ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան.	50 կ.
Հ. Առաքելեանի	1 ր.
7) Կերոններ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	40 կ.
8) Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի	20 կ.
9) Մի [illegible] մի գիր (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	35 կ.
10) Ընկերվարութիւն եւ հայ ընկերվարականներ, Մուշեղ եպիսկոպոսի	15 կ.
11) Ծորտերի ազատագրութեան յիսնամեակը, նկարներով	15 կ.
12) Անգլիայի հասարակական եւ քաղաքական կեանքը, Թարգմ. Մ.-ի	30 կ.
13) Միլտոնի կեանքը և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	25 կ.
14) Գալիլէյի կեանքը և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	80 կ.
15) Աստուածային հրահանգ հանրապետոց, Մակար եպ. Բարխուդարեանի	1 ր. 50 կ.
16) Գրիգոր Օտեան.	
17) Խաղաղասիրական պատանեկական գիրք, Արթիւր Միւլլէրի, Թարգմ.	40 կ.
Իս. Յարութիւնեանի	15 կ.
18) Փարաւօնն ու հանճարը, Աւ. Եղիկեանի	20 կ.
19) Отвѣтъ Архіепископа Мелхисетека Мурадьяна на посланіе Римскаго Папы Льва XIII	20 կ.
20) Տուբերկուլօզը, թոքախտ եւ հասարակութիւնը, բժ. Արտ. Շխեանի	25 կ.
21) Туберкулозъ, Чахотка и Общество, բժ. Արտ. Շխեանի	20 կ.
22) Հայ-վրացական յարաբերութիւնների պրօբլէմը, Բ. Իշխանեանի	10 կ.
23) Ռուսական վանքերը Ֆինլանդիայում, Գ. Տէր-Ռուբինեանցի	3 կ.
24) Ազգային երկու մեծութիւններ, Գ. Զթենցի	

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%: (6) 0—14

Типографія „ЭКОНОМІЯ", Тифлисъ